



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material




Ա. ԲԵԼՈՎ.

ՀՐԱՄԱՆԸ

ՅԵՎ. ԵՐԱ. ԽԵՂՄԵԼԸ

1930



Ա. Բ ԵԼ ՈՎ

623.44


70

ՀՐԱՑԱՆԸ

ՅԵՎ. ՆՐԱ. ԽՆԱՄԵԼՔ

170447
A 3823

32 ԵԿԱՐԴՈՒ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ ԽԱՐԴՐԱՄԱՆԱՀԱՆ

ՅԵՎ. ՆՐԱ. ԽՆԱՄԵԼՔ

1980 թ.

ВИНТОВКА И УХОД ЗА НЕЙ

Սերգեյ Ալեքսանդրավիչ Բնլով. — «Հրացանը և նրա խնամելը»:
Այս գրքույկում՝ հեղինակը, տալրվ սկզբում շատ ամփոփ և ժամանակութեան հրացանի ժամերի նկարագրությունը, հետագայում ըստ
հետաքրքին ավելի ժամերամասնորեն կանգ և առնում նրա վրա, թէ
ինչպես պետք և խնամել հրացանը, ինչպես ուղարկել նրանից։ Այդու
պիսով հեղինակը տալիս և մի շարք գործարար ցուցումներ, վո-
րոնք չոփազանց օգտակար են հրացանամդիք համար։

ՀՐԱՑԱՆԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՀԱՏԿԻԹՅՈՒՆՆԵՐԸ

Այն հրացանը, վորով զինված ե մեր կարծիք բանակը, պարզ ե իր կառուցվածքով, միշտ պատրաստ ե գործողության համար, առուր ե, դիմացկուն և աշխատում ե անխափան։ Նա կոչվում ե յերեքգծանի հրացան 1891 թվականի տիպարի։

Եերեքգծանի յե նա կոչվում նրա համար, վոր հրացանի տրամաչափիը, այսինքն՝ փողանցքի լայնքը յերկու հակադիր առերի միջև հավասար ե 3 գծաչափի կամ 7,62 միլիմետրի։

Մեր այժմյան հրացանի մեջտեղում կա պահեստատուփ, վորով հրացանը միանգամից լցվում ե 5 փամփուշտով, այդ ավելացնում ե հրաճգության արագությունը։

Փողանցքն ունի չորս պտուտակաձև ակռաներ, վորոնք պտտվում են ծախից վեր դեպի աջ։ Այդ ակռաները գնդակին պտուտական շարժում են տալիս փողանցքում և ըստիպում են, վոր գնդակը փողանցքից դուրս գալուց հետո թոշի ուղիղ, այսինքն՝ դլխիկը դեպի առաջ պահի և չուռ ու մուռ չգա ոդում։ Յեթե գնդակն արճակենք հարթ փողունեցող հրացանից, գնդակը կթոշի, ինչպես համանի, չի կարող արագ նեղքել ոդը և արագ

թռչել։ Քամին և ողի խտությունը ամբողջ ժամանակ կխանգարեն նրա թռիչքին և այն ել կխանգարեն տարբեր ձեվերով, նայտ քամու ուժին, ողի խտության և գնդակի մակերեսի մեծության։ Իսկ յեթե ամեն անգամ տարբեր քամի լինի և ողն ել խանգարի գընդակի թռիչքին, մենք յերբեք վաղորոք չենք իմանա, թե ինչպիսի տարածություն կթռչի գնդակը, վորքան հեռու նա կշեղվի և ինչպես կհարվածի հարկավոր նշանը։ Ակոսներից պտուտական շարժում ստացած գնդակը մի տեսակ պտուտակվում է խցանահանի պես ողի մեջ, ուստի և ուղիղ և թռչում, շուր ու մուռ չի գալիս, չի շեղվում այս ու այն կողմը։

Յգծանի հրացանից արձակած գնդակի տրագությունը հասնում է 5.500 քայլի, կամ համարյա 4 կիլոմետրի, և մինչև հեռահասության այդ սահմանը թռիչքի ամբողջ ժամանակ նա պահպանում է իր հարվածելու ուժը։ Մոտ տարածություններից նա ծակում անցնում է 2 և կես սանտիմետրանոց 35 սոճի (շամի) տախտակ կամ կես մետրանոց հողաթումբ, կամ 2 աղյուսի հաստությամբ աղյուսի պատ և այլն։

Հրացանը հրացանաձիգի անձնական գենքն է, հրացանաձիգն ինքն և իր վրա կրում հրացանը յերթում։ Այդ պատճառով հրացանի քաշն ըստ հնարավորին թեթեվացրել են։ Սըվինով, առանց փամփուշտների նա քաշում է մոտ 4 և կես կիլոդրամ (10 և 3 քառորդ ֆունտ)։ Նրա յերկարությունն է սվինով 1,65

ժեռք (2¹/4 արշին), առանց սվինի՝ 1,2 մետր
(1 և 3 չորրորդ արշին)։

Հրացանի խփելու ճշտությունը չափա-
ղանց մեծ է։ Մինչեւ իսկ միջին վորակի հրա-
ցանաձիգը կարող է հույս ունենալ, վոր կրա-
կելով մեկական նշանների դեմ, կարող է լավ
հարվածել 600 քայլից։ Հակառակորդի ամ-
րողջ հասակով բաց վագեվազք կատարող
մարդկանց ու բանակներին կարելի յեւ հաջո-
ղությամբ հարվածել 1000 քայլից։

Դերազանց հրացանաձիգը, զինված ընտիր
հրացանով, մահավանդ ունենալով տեսողական
նշանոց, կարող է հաջողությամբ հարվածել
յուրաքանչյուր նշան մինչեւ 1200 քայլի վրա,
յեթե նշանը տեսանելի յեւ։

Հրացանը միանգամից լցվում է 5 փամ-
փուշտով, բայց հրաձգությունը նրանով կա-
րելի յեւ կատարել միայն մենազարկերով (մե-
կական ձիգերով)։ Այդ պատճառով ել հրա-
ցանի արագածդությունը շատ մեծ չե։ Ճար-
պիկ հրացանաձիգը մինչեւ իսկ փոքր տարա-
ծություններից կարող է մի ըովելում որձա-
կել վոչ ամելի քան 10—12 գնդակ։ Բայց դե-
րազանցամեռ իր գենքը ճանաչող, հրացանը
հմտորեն խնամող և լավ պատրաստված դիտա-
կից հրացանաձիգի ձեռքում նա անփոխարինելի
յեւ, վորպես ճիշտ, հուսալի և դործածության
մեջ հասարակ մերձահար գենք։

Եռրուգանչյուր հրացան ունի համար (№),
վոր դաշնամ է փողի, կոթի խզատակի, սվի-
նի, փակաղակի կոթունի, պահեստատուի կա-
փարիչի և հրահանի վրա։ Այդ համարը պետք

ե միատեսակ լինի վերոհիշյալ բոլոր մասերի
վրա։ Փողի վրա դաջվում ե նաև այն զինա-
գործարանի դրոշմը, վորտեղ պատրաստված
ե հրացանը և նրա պատրաստելու տարեթիվը։

Բանակում գտնված բոլոր հրացանները
բաժանվում են յերկու տիպարի։ Առաջին տի-
պարին պատկանում են մարտական հրացաննե-
րը, վորոնցով մարտիկները խաղաղ ժամանակ
սովորում են կրակել և վորոնցով պատերազմի
յեն գնում, իսկ յերկրորդ տիպարին պատկա-
նում են վարժական հրացանները։ Վարժական
հրացանները նրա համար են, վորովեսզի այդ
հրացաններով ուսումնասիրեն զենքի մասերը
(նյութական մասը), հրացանի քանդելն ու հա-
վաքելը։ Վարժական հրացանների փողերի վր-
րա, մարտական հրացաններից տարբերելու
համար, բացի այն նշաններից, վոր կան մար-
տական հրացանների վրա, կա «ՍԿ» նշանը։
Բացի դրանից վարժական հրացանների ա-
գուստները ներկված են լինում ու գույնով։

ՀՐԱՑԱՆԻ ԿՍՁՄՈՒԹՅՈՒՆԸ

Հրացանը կազմում են՝ միողը՝ փողատու-
փի, զատիչանդրադարձիկի, վայրի ջույց՝ մե-
խանիզմի, նշանոցի և հատիկի հետ, փակա-
ղակը, պահեստատուփը, ադուսար, փողա-
պատր, սվինը և պարագայքը։ Բացի դրանցից,
յուրաքանչյուր հրացան ունի պատկաննելիք հը-
րացանը քանդելու, հավաքելու, մաքրելու և
խնամելու համար։


Փողը (նկար 1) հրացանի ամենակարեվոր

մասն ե, վորովհետեւ նրա ներսում գտնվող առկուներով անցքը տալիս ե գնդակին կրակելու ժամանակ այն ուղղությունը, վորով հրացանաձիգը կամենում ե արձակել գնդակը և գընդակին տալիս ե այն պտուտական շարժումը, վոր անհրաժեշտ ե, վորպեսզի գնդակը թռչի դլխիկն առաջ ունենալով։

Փողը մի յերկար, յերկու ծայրը բաց խողովակ ե, վորը պատրաստված ե ընտիր պողպատից։ Նրա առջեկի ծայրը կոչվում ե փողի թերան (փողոթերան), իսկ յետեկինը՝ լցամաս։

Թե ինչու պետք ե փողը պատրաստված լինի լավ պողպատից, միանգամայն հասկանալի յե։ Առողջային դագերի մշտական մեծ ճնշումը, վոր գործում ե փողի պատերի վրա, արագ մաշում ե փողը, և յեթե պողպատը վատ լինի, հրացանը չի կարող դիպուկ կրակել։

Լցամասն այն տեղում, վորտեղ գտնվում է փամփշտանոցն ու փամփշտի անցքը, ավելի հաստ ե, քան թե փողաթերանը, վորովհետեւ այնտեղ ստացվում ե վառողի պայթյունը, ուրեմն և դագերի ամենամեծ ճնշումը ձիգի ժամանակ։ Յեթե լցամասը միատեսակ հաս-



Նկ 1 Փողի ու փամփշտանոցի կտրվածքը
տություն ունենար փողաթերանի հետ, հրացա-

Աը զաղերի ուժեղ ճնշումից կարող եք այդ
տեղում պատովիել:

Փողի ներսում կա թափնթափ անց և պը-
տուտակտածն ակոսներով, վորոնք փողի ամ-
բողջ յերկարությամբ մոտ յերեք պտույտ են
գործում:

Փողի վրա դրսից կա հատիկի հիմքը, վո-
րը մի ամբողջություն և կազմում փողի հետ և
ծառայում և հատիկի ամքացման համար: Հա-
տիկի հիմքը ծառայում և նաև փողին հագցը-
րած սվինը պահելու համար: Բացի դրանից,
փողի վրա կա նշանոցի հիմքը (նշանոցի կոճ-
ղակը), վորը նույնպես մի ամբողջություն և
կազմում փողի հետ և ծառայում և նշանոցի
շրջանակի ամքացման համար:


Փողատուփը (նկ. 2) անշարժ պտուտակ-
վում և փողի վրա և այդպիսով կազմում և
փողի ու նրա լցամասի շարունակությունը



Նկ. 2. Փողատուփ


Փողատուփի մեջ շարժվում և շարժական
սահող փակաղակը (նկ. 3): Փակաղակը բաղ-
կացած և փակաղակի կոթունից ու բունատե-
ղից, մարտական փակից (նկ. 4) նետիչից (նը-
կար 5), զարկանից (նկ. 6), խփելու զապա-
նակից (նկար 7), չրահանից (նկար 8) և միա-
ժնող քանոնից (նկար 9), վորն իրար և միուց-

նում փակտղակի մասերը։ Փակաղակն ամուր փակում և փողանցքը լցամասից և թույլ չի տալիս, վորպեսզի դաղերը յետ դնան։



Նկ. 3. Փակաղակ.


Զիգի ժամանակ դաղերը տարածվում են չորս կողմը։ Բայց վորովհետև փողանցքը յետից փակվում և փակաղակով, խոկ կողքերից



Նկ. 5. Նեռիչ

Նկ. 4. Մարտական փակ



դաղերին պահում են փողի ամուր պատերը, ուստի միակ ուղղությունը, վորով նրանք



Նկ. 6. Զարկան

կարող են դուրս դալ, հանդիսանում և փողարերանը։ Բայց վորպեսզի դաղերն այստեղից կարողանան դուրս դալ, նախ սկսէք ե դուրս հըսկեն դնդակին։ Գաղերն առաջ են հրում այդ

զնդակը հսկայական ուժով, նետելով նրան հը-
րացանաձգից մինչև 4 կիլոմետր հեռու:



Նկ. 7. Փոխելու զսպանակ


Նկ. 8. Հրահան

Դրսից փողատուփի վրա կա վերին պատու-
հան, փամփուշտները դնելու և փակաղակը
փակած ժամանակ, նրա կոթունի կատարը տե-



Նկ. 9. Միացնող բանե.


ղավորելու համար: Փողատուփի ներքեւի պա-
տուհանի մեջ հագցրված և պահեստատուփը
(Նկար 10): Պահեստատուփում գտնվում են 4
փամփուշտ, իսկ հինգերորդը գտնվում է փո-
ղում:



Նկ. 10. Պահեստատուփը ձգանի կամրջակով

Այդ փամփուշտները պահեստատուփից փո-

կատունիր տալու համար պահեստատուփի ներս
սում գտնվում է տվիչ մեխանիզմը (նկար 11),
վորը կազմված է սովորական լծակի ձեւով



Նկ. 11. Տղիչ մեխանիզմ.

ձնդիկի վրա, ունի զսպանակ և հրում և հերթական փամփուշտը դեպի փողատուփը:

Վորավեսպի փամփուշտները տրվեն ըստ կարողի, առանց մեկը մյուսի վրա ընկնելու և խանդարելու փակաղակին փակվելու, փողատուփի ճախ կողմում շինված և զատիչ-անդրադարձիկը (նկար 12): Այդ զատիչը անդրադարձիկը պահում է փամփուշտները պահեստատուփում: Նա իր թաթի ծայրով պահում է



Նկ. 12. Զատիչ անդրադարձիկ.

հաջորդ փամփուշտը և այդպիսով փողատուփը բաց և թողնում միայն միամի հատ փամփուշտն և այն ել հերթով: Բացի դրանից, զատիչ-անդրադարձիկը իր ատամով ոգնում է փակաղակին դուրս նետել, կամ անդրադարձ-

նել կրակոծ պարկուճները, վորոնք փակաղակի արագ բացման ժամանակ խռչում են դեպի աջ ու վեր:

Զիդը տեղի յե ունենում մատով ձղանին սեղմելուց ։ ձգանը վայրի ջուց մեխանիզմի հիմնական մասն ե։ Վայրի ջուց մեխանիզմը նույնպես ամրացված ե փողատուիին։


Վորպեսզի ձգանը մատով թեթև սեղմելուց պատահական ձիգ չառաջանա հրումների ժամանակ, հրացանն ուսին դեմ տալիս կամ այլ դեպքերում, ձգանի զսպանակն այնքան պինդ են պատրաստում, վոր նա դիմանում ե Հ կիլոդրամ (5 ֆունտ) ծանրության ուժի։

Բայց ձիգ կարող ե առաջանալ, յեթե ձըդանը պատահմամբ ընկնի վորեե բանի, վորը հեշտությամբ կարող ե պատահել սողալիս։ Վորպեսզի այդ տեղի չունենա, ձղանը պահպանված ե կամրջակով (նկար 10), վորն ընդդրկում ե ձղանը ողակի պես։

Վորեե նշան հարվածելու համար հրացանաձիգը պետք ե նշան բռնի, այսինքն՝ մտքով իր աչքից պետք ե անցկացնի մի դիմ, վորն անցնի նշանոցի դիտոցի մեջտեղից դեսլի հատիկի դադաթը և իր ծայրով դեմ առնի այն կետին, ուր նշան ե բռնում հրացանաձիգը։

Բայց գնդակն իր ծանրության և յերկրի ձղողության պատճառով ամբողջ ժամանակ շեղվելու յե ձիգի գծից դեսլի ցած, մինչև վոր կընկնի գետինը։ Ուրեմն յեթե հրացանաձիգն ուզում ե հարվածել իրենից վորեե տարածության վրա գտնվող նշանը, նա պետք է ուզով ձիգի դիմը, այսինքն՝ հրացանի փողն

այդ նշանից այնքան վեր, վորչափ գնդակը
թռչելով այդ տարածությունը պետք է ցած
իջնի:




Նկ. 18. Նշանոց ու հասիկ.

Յեթե հրացանի վրա չլիներ նշանոցը,
այդ գործը չափազանց դժվար կլիներ, հարկ
կլիներ հիշել, թե ինչքան մենք պետք ե բարձ-
րացնենք փողը, կրակելով այս կամ այն տա-
րածությունից: Այդ հիշելն, իհարկե, անկա-
րելի յե, ուստի հրացանի վրա նշանոցը պատ-
րաստված ե այնպես, վոր նրա ոգնությամբ
կարելի յե փողին տալ զանազան դրություն:

Նշանոցը պատրաստված ե խաղերով.
կոճղի վրա 4-ից մինչև 12 և նշանոցի շրջանա-
կի վրա՝ 13-ից մինչև 32: Նշանոցի շրջանա-
կի վրա կա շարժական անրիկ դիտոցով: Յե-
թե այդ դիտոցը հաստենք այն խաղի վրա,

Վորը տույց եւ տալիս տարածությունը մինչև
 նշանը (4 աստիճանի վրայից իջեցված նշանոցը
 հնարավորություն եւ տալիս խփելու 200 քայլի
 վրա, 6 աստիճանից՝ 400 քայլի վրա և այլն),
 այն ժամանակ փողը կրարձրանա այնքան,
 վորքան հարկավոր եւ, վորպեսզի գնդակը
 հասնի նշանին: Իհարկե, գիտենալու համար,
 թե ինչ նշանոց պետք եւ դնել, նախ պետք եւ
 գիտենալ մինչև նշանը յեղած տարածությունը:
 Այդ վորոշվում եւ կամ աչքաչափով կամ
 հատուկ գործիքներով:




Նկ. 14. Ազումտի ողեր: Հրացանների մեջ մասի վրա տռայթա
 շարժական ողեր:


Ինքնին հասկանալի յեւ, վոր հրացանի բո-
 լոր մասերը պետք եւ ամրացված լինեն իրար,
 թե չե հրացանից ոգտվելն անհնար կլինի:
 Բացի դրանից պետք եւ վորնեւ բանով ծածկել
 և փողը, վորը հրաձգության ժամանակ սաս-

տիկ շիկանում ե (տաքանում ե) և կարող է այրել ձեռքերը։ Հրացանի գործողությունների հարմարության համար փողն ու փողատուփըն ամրացված են փայտե ազուստի մեջ, փորն ունի կոթ։ Կոթը հրաձգության ժամանակ դեմ են տալիս ուսին։

Ձեռքերն այրվելուց պաշտպանելու համար փողը վերևից ծածկվում է փայտե փողապատով։



Նկ. 15. Հենարանի և
պղղի պառատակներ.



Նկ. 16. Ազուստի խզանակ
փիշով.

Փողի մասերի ամրացումն ազուստի և փողապատի հետ կատարվում է պարագայքի ողությամբ։

Պարագայքը կազմում են ազուստի ողերը (նկար 14), վորոնք միացնում են փողը կոթի և ազուստի հետ։ Հենարանի ու պոչի պտուտակները (նկար 15), վորոնք միացնում են փողատուփը պահեստատուփի և ազուստի հետ։ Խզատակը, վորը պահպանում է կոթը վնասվածքներից (նկար 16) և այլ մասերը, վորոնք նպաստում են հրացանի խփելու համար պատրաստ լինելուն և նրա պահպանմանը։

Սվինը ծառայում ե հակառակորդին բոնամարտի ժամանակ հարվածելու համար։ Նա (նկ. 17) ունի քառանիստ լեստ մատնեցներով, վորոնք շինված են նրա քաշը պակասեցնելու համար։ Փողակի ոգնությամբ սվինն ամուր հագցնում են փողին, իսկ սվինի շրջադարձ անրիկով նա ամրացվում ե հատիկի հիմքի հետ։

Մեր յերեքդժանի հրացանը նշանակված ե կրակելու փակցրած սվինով, վորովհետև առանց սվինի կրակելիս ստացվում ե գնդակի չեղում նշանառության կետից դեպի աջ։ Բայց փակցրած սվինով կրակում են դվավորապես այն պատճառով, վոր յեթե սվինը լավ ե հարմարեցված հրացանին, ստացվում ե գնդակների ավելի քիչ ցրում, քան թե առանց սվինի կրակելիս, վորովհետև, յերբ սվինը հագցված ե, փողաբերանի մասն ավելի քիչ է դողում։ Փորձերից ստացված են ցրման հետեւյալ տարածությունները։

Առանց սվինի	200	քայլից	400	քայլից
միշտ փակցրած սվինով	27	սանտիմ.	60	սանտիմ.
8երերիող սվինով	25	3	53	3
	33	3	68	3

Հրացանը մաքրելու, մաքրելուց առաջ քանդելու և մաքրելուց հետո հավաքելու համար յուրաքանչյուր հրացան ունեում ե պատ-



կանելիք։ Պատկանելիքը կազմում էն՝ շամփուրը՝ շամփրի կոթառով, վորը գործադրս վում և փողանցքը մաքրելու և հարկ յեղած վեպքում փամփչտանոցում մնացած պարկունը կամ փամփուշտը դուրս հրելու համար։

Շամփրի կոքառը, վորը վերին մասում
ունի թափնթափ ծակ, հետացնում է շամփրի
պտտվելն ակոսների վրայով փողանցքը մաք-
րելու ժամանակ: Կոթառով ոգտվում են բա-
ցառապես շամփուրը հարմար պահելու հա-
մար հրացանը մաքրելիս:


Տամփրի պատուակավոր ծայրի վրա պըտուակում են, յերբ այդ հարկավոր ե, մաքրիչը (նկար 18), վորն ունի պատովող պղնձեմաս: Այդ պղնձեմասի վրա փաթաթում են լաթ կամ խծուծ, վորով և մաքրվում ե փողանցքը: Բայց յեթե հրացանը մաքրելիս անըզգուշությամբ փողանցքի մեջ իջնցնեն շամփուրն ու մաքրիչը, կարող են փշացնել փողաքերանն ու նրա շուրբթը: Փողանցքի շուրբթը մաշվելուց պահպանելու համար պարագայքի մեջ մանում ե փողաքերնի պահպանակը (նկ. 19): Նա նույնպես հաղցվում է շամփրի վրա և մաքրելու ժամանակ ամուր փակում ե փողաքերանը, պահպաննելով այն փշանալուց:



14 18. Успехи.


Պարուղայքի մեջ և մտնում նաև երացանի
փոկը, վորով սպավում են և՝ հրացանը կը բակե-

լու և՝ կը ակելիս արհեստուկան հենաբան ստեղծած հելու համար, փաթաթելով փոկը ձախ ձեռքի շուրջը։ Փոկի յերկարությունը մոտ 1,3 մետր է (մոտ 2 արշին), իսկ լայնությունը՝ 3,3 սանտիմետր (յերեք պարորդ վերշոկ)։




Նկ. 19. Փողաբերնի պահպանոկ.

Վերջապես՝ նույն պարագայքին պատկանում են փայտե ձողիկները (նկար 20), սրած ծայրերով հրացանի ճեղքերն ու անկյունները մաքրելու համար և պարանե կամ կաշվե ողը (նկար 21) հրացանից բուրդ կազմելու համար։ Թե ձողիկները և թե ողը պատրաստում են ինքը հրացանի տերը, ձեռքի տակ յեղած նյութերից։




Նկ. 20. Փայտե ձողիկներ.



Նկ. 21. Պարանե ող.

Նույն պարագայքում կա նաև պտումա-

կիչ՝ հրացանը քանդելու և սարքելու ժամանակ պտուտակները պտուտակելու և յետ պըտուտակելու համար։



Նկ. 22. Զարկանի ասեղի դուրս գոլու առուղումը.

Պտուտակիչի լիստի կողերի վրա կան յերեքական կտրուճներ։ Միջին կտրուճները ծառայում են զարկանի ասեղի մարտական փակից դուրս դալու չափն ստուգելու համար, իսկ կողքերի կտրուճները ստուգման ժամանակ մարտական փակի ոլուակի վրա դնելու համար են։ Յեթե զարկանի ասեղն անցնում է պտուտակիչի ավելի խոր կտրուճից և զեմ է առնում ավելի սաղը կտրուճին, նշանակում են առ ճիշտ պետք ե գործի։ (Նկար 22)

ՀՐԱՑԱՆԻ ՔԱՆԴԵԼՆ ՈՒ ՍԱՐՔԵԼ

Իմանալու համար, թե ինչպես պետք ե խը-

Նամեն հրացանը, անհրաժեշտ է կարողանալ
քանդել ու սարքել հրացանը:

Ամենից առաջ խոսենք, թե ինչպես և
քանդվում հրացանը:

Վորպես ընդհանուր կանոն, հրացանը
քանդվում է գլխավորապես մաքրելու, յուղե-
լու և զննելու համար: Չափազանց հաճախ
քանդելն արագացնում է մասերի մաշվելը,
իսկ անզգուշ քանդելու ժամանակ մինչև իսկ
վնասվածքներ և պատճառում: Հաճախ հարկ
է լինում քանդել վարժական հրացանները,
վորոնցով ոգտվում են վարժական քանդելու
ու սարքելու համար:

Հրացանները քանդելու ու սարքելու ժա-
մանակ հարկավոր է լինել խստ ճշտասլահ,
վորովհետև վորեն մասը հանելիս կամ դնելիս
կարելի յե փչացնել և հարեան մասերը: Իսկ
մասերի փչացումը կարող է շարքից հանել
հրացանը: Որինակ՝ յետ պտուտակելով այս
կամ այն պտուտակն անհրաժեշտ է չհանել պը-
տուտակիչի լեստը պտուտակի կտրվածքից
այնքան ժամանակ, մինչև չի զգացվի, վոր
պտուտակն ազատ շարժվում է: Հենց վոր ըդ-
դացվում է ազատ շարժումը, հարկավոր և
պտուտակը յետ պտուտակել մասներով: Այն
պտուտակները, վորոնք չեն յենթարկվում պը-
տուտակին, պետք չե ուժով յետ պտուտակել,
այլ հարկավոր է դիմել զենքի արհեստանոցը:
Պտուտակները պտուտակելիս ու յետ պտու-
տակելիս պտուտակիչը պետք է ամբողջ բուան
մեջ պահած ունենալ, իսկ լեստն ամբողջ բե-
րանավ պտուտակի կտրունի մեջ կիսդ դնել, թե

չե պառուտակիչը կարող է դուքս պրծննի և իր
սույր ծայրով փչացնել հրացանի վորեե մա-
սը:

Հրացանն ունի շատ մանր մասեր, վորոնք
անձշտապահ քանդելու ժամանակ կարելի յե
կորցնել, ուստի հրացանը պետք է քանդել ու-
սարքել միշտ սեղանի կամ նստարանի վրա.
իսկ յեթե քանդելը տեղի յե ունենում դաշ-
տում, անպայման տակը պետք է մի բան փը-
ռած լինի: Բացի դրանից հրացանը միանգառ-
մից չեն քանդում մինչեւ վերջ, այլ անում են
այսպես. քանդելով հրացանի վորեե մասերից
մեկը, թեկուզ, ասենք, փակաղակը, նրա մաք-
րելուց հետո անմիջապես կըկին հավաքում
են և դրանից հետո սկսում են քանդել հաջորդ
մասերը:


Իսկ ինչ կարգով են քանդում հրացանը:

Ամենից առաջ հանում են սվինը: Դրա հա-
մար պետք է կոթով գետնին դնել, սվինի ան-
րիկը պետք է դարձնել մինչեւ դեմ առնելը և աջ
ձեռքի ափով թեթե խփում են սվինի ճիտի
տակ ու հանում սվինը: Յեթե սվինը դժվար է
դուրս դալիս, կարելի յե դործադրել հատուկ
փայտե թակ, վորով թեթե խփում են ճիտի
տակ Պետք է խուսափել ուժեղ հարվածնե-
րից, վորպեսզի չփչացնի հատիկի հիմքը, իսկ
հատիկի վրա վորեե ծովածք կամ լնասվածք
անխուսափելիորեն կազդի հրացանի դիպու-
կո թյան վրա:

Այնուհետև յետ են պառուտակում և վեր
են քաշում շամփուրը:

Հետո հանում են փակաղակը: Փակաղակը

Հանելու համար հրացանը պետք է դնել վորեւ
փափուկ բանի վրա կամ սեղանի վրա։ Զախ
ձեռքի ցուցամատով հրացանաձիգը սեղմում է
ձգանին, իսկ աջ ձեռքով բացում և և հանում




Նկ. 25. Փակուղակի բանզելը.

Փակաղակը: Յերբ բավականաշափ ուժեղ ենք
սեղմում ձգանը, փակաղակը հեշտ և աղատ և
դուրս դալիս։

Այն ժամանակ, յերբ փակաղակը հան-
ված է, նրան հարկավոր է դնել ու քանդել։
Դրա համար փակաղակը վերցնում են ձախ
ձեռքով այնպես, ինչպես ցույց է տված № 23
նկարում, աջ ձեռքով յետ են քաշում հրահա-
նը, վոր հրահանի պտուկը դուրս դա ճղատից։
Յերբ հրահանը յետ և քաշված, մարտական
փակը միացնող քանոնի հետ կբաժանվի փա-
կաղակի կոթունից ինքն իրեն։ Դրանից հետ
պարզապես պտտեցնելով կարելի յե իրարից
բաժանել միացնող քանոնն ու մարտական փա-
կը։

Այնուհետև փակաղակի քանդելու միջոցին
առանձնացնում են հրահանը։ Դրա համար փա-
կաղակի կոթունը դնում են ուղղաձիգ (տես

նկար № 24), զարկանն իր ասեղով հենել անպայման վորեե փայտի—սեղանի, տախտակի և այլն,—վորպեսդի չկարողանա սահել։ Այնուհետև բավական ուժեղ սեղմում են կոթունի բռնակին, դրանով սեղմելով մարտական դսպանակը։ Շնորհիվ դրա հրահանն աղատ-



Նկ. 24. Հրահանի բաժանումը.

վում եւ և հեշտությամբ յետ պտուտակվում զարկանից։ Կոթին սեղմելը պետք ե թուլացնել դանդաղ, այն ժամանակ կոթունը բարձրանում ե վեր նույնական դանդաղ։ այլ կերպ նա կարող ե ուժով դուրս թռչել վեր և վիրավորել փակաղակը քանդողի յերեսն ու ծեռքելը։

Այնուհետև կոթունից հանում են զարկանը

մարտական զսպանակի Հետ միասին և վերջապես զարկանի վրայից հանում են մարտական զսպանակը:

Յերբ արդեն փակաղակը քանդված է, դընաված, մաքրված ու յուղված, պետք և կրկին սարքել ու մի կողմը դնել: Այդ արվում են նրա համար, վորպեսդի քանդված փակաղակի մասերն իզուր թափթփված չմնան:

Հետո բաժանում են փակաղակը:

Դրա համար վերին ճեղքից հանում են հրացանի փոկը, վորը հակառակ դեսպում կը-




Նկ. 25. Հենաբռնի պառատակի յիտ պառատակներ.

խանդարի, այնուհետև յերկու պառայտով թուլացնում են հենաբանի ու պոչի պառատակ-

ները։ Յեթե բոլորովին յետ պառատակենք այդ
պառատակները, այն ժամանակ փողը կանջատ-
վի աղուստից, իսկ փողապատը հանելու հա-
մար մեզ այդ հարկավոր չե։ Հետո հանում են
աղուստի ողերը, վորոնք պահում են փողա-
պատը, բարձրացնում են նշանոցի շրջանակը
և միայն այն ժամանակ վերջնականապես բա-
ժանում փողապատը։ Նրանից հետո, յերբ
փողապատը բաժանված է, նշանոցի շրջանակը
կը լին իջնում են և նորից հաղցնում ներքեմի
ողը։ Ներքեմի ողը հաղցնում են նրա համար,
վորակեսզի մինչեւ հրացանի վերջնական քան-
դելը ժամանակավորապես ամրացնեն այն։

Այնուհետև փողը բաժանվում է ագուս-
տից։ Դրա համար հրացանը դրվում է ուղղա-
ձիգ (նկար 25) և այդպիսի դրությամբ յետ




Նկ. 25. Պոչի պառատակի յետ պառատակումը.

և պառատակվում հենարանի պառատակը։ Հետո
հրացանը դրվում է մի բանի վրա—ձախ ձեռքով

պետք ե պահել փողն ու պահեստատուիր, թե
չե պահեստատուիր վայր կընկնի—և յետ են
պտուտակում՝ պոչի պտուտակը (№ 26):
Դրանից հետո բաժանում են պահեստատուիր
և վերջապես հանում են ներքեի ողը:

Այժմ պետք ե բաժանել փողն ազուստից:
Այդ այսպես են անում: Մացնում են ցուցա-
մատը փողատուիի անցքի մեջ և այդ մատով
աստիճանաբար բարձրացնում են փողը:

Կարող են պատահել դեպքեր, յերբ փողն




Նկ. 27. Փողը բաժանվում է ազուստից.

առանց ուժի չբաժանվի: Այն ժամանակ փո-
ղի ծայրը հենում են մի բանի (նկար 27) և կո-
թը մի քիչ դեպի վեր բարձրացնելով, բաժա-

նում են առաջ փողակալը, իսկ այնուհետև
նաև փողը։ Այդ ժամանակ անպայման պետք
է հետեւել, վորպեսզի ձգանը և փողակալի
հենարանն ու պոչը չփշացնեն իրենց տեղերն
ադուստի մեջ, յեթե վոչ հրացանը հետո դըժ-
վար կլինի կարդի բերել մինչեւ իսկ արհես-
տանոցում։

Այն ժամանակ, յերբ հրացանածիդը փողը
բաժանել է ադուստից, նա սկսում է բաժանել
կափարիչն ու տվիչ մեխանիզմը պահեստա-
տութից (նկար 28)։

Դրա համար նա սեղմում է մղլակի գլխին
և բաց և անում կափարիչը, այնուհետև սեղ-
մում է տվիչ մեխանիզմը և կափարիչը հա-
նում է ծխնու սեռնակից և վերջապես յետ է



Նկ. 28. Կափարիչի ու տվիչ մեխանիզմի բաժանումը պահեստա-
տութից։

պտուստակում մղլակի պտուստակը և մղլակի
գլխից բռնած հանում ե իր բնից։

Ամենից վերջում հրացանաձիգը բաժանում
ե և քանդում վայրիջույց մեխանիզմը։ Այդ տա-
նում ե այսպես։ Փողը դնում ե մի բանի վրա
նշանոցով դեպի ցած և յետ ե պտուտակում
ձգանի զսպանակի պտուտակը։ Հետո փայտի-
կով դուրս ե հրում սեռնակը, վորից հետո բա-
ժանում ե փողից ձգանը զսպանակի հետ միա-
սին և բաժանում ե ձգանի զսպանակը ձգա-
նից։

Հրացանի վրա կա մի մաս ևս, վորը կա-
րելի յե բաժանել վոչ արհեստանոցում։ Այդ
մասը կոչվում ե զատիչ-անդրադարձիկ։ Բայց
այդ մասը հրացանի կարեռքագույն մասերից
մեկն ե և բացի դրանից նա չափաղանց նուրբ
ե։ Նրա սարքելու ժամանակ ամենափոքր ան-
ճշտությունը կարող ե կոտրվածք առաջաց-
նել, իսկ այդ մեխանիզմի ամենափոքր անճշ-
տությունը անհնար ե դարձնում հրաձգու-
թյունը։ Կարող ե պատահել, վոր զատիչ ատա-
մի տակից վերին փամփուշտը դուրս պրծնի-
ու անցնի փամփուշտանոցը նախքան փակաղակն
աջ դարձնելը, կամ փակաղակն արագ յետ
տալու ժամանակ։ Վերջապես՝ զատիչ ատամն
իր անսարքության հետևանքով կարող ե չը-
պահել փամփուշտները պահեստատուփում։
Կարող են խափանումներ առաջանալ փամ-
փուշտները դեպի փամփուշտանոցը տալու մի-
ջոցին և այդպիսով խախտվի հրացանի ճիշտ
ոշխատանքը։ Այդ պատճառով զատիչ-անդ-
րադարձիկը թույլատրվում ե բաժանել միայն
հրամկաղմին պատկանող անձանց։

Վոչ հրամատարին և վոչ մարտիկին չի

թույլատրվում վերոհիշյալից զատ այլ կերպ
քանդել հրացանը։ Հրացանի հետզա քանդելն
արդեն կատարվում և զենքի արհեստանոցում։
իսկ այնպիսի մասերը, ինչպիսին են փողա-
տուփիք, նշանոցի կոճղը, պահեստատուփի կո-
ղերն ու գուրղամները և ծխնեսեռնակն իր
տափողակով բաժանվում են միայն գործա-
րանում։

Հրացանի հավաքելը կատարվում և հա-
կառակ կարգով, սկսելով վայրի ջույց մեխա-
նիզմից։ Այնուհետև հավաքելու համար վերց-
նում են պահեստատուփիք տվիչ մեխանիզմով,
վորը նախավերջինն և քանդելու ժամանակ և
այլն։

ՀՐԱՑԱՆԻ ԶՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՆԴՎԱԾ ԶԵՎՈՎ

Մարտական հրացանի քանդելը կատար-
վում և միայն հատուկ կարիքի դեպքում կամ
նրա զննության, մաքրելու, յուղելու համար,
կամ փորձնական հրածգությունից առաջ։

Այդպիսի զննության ժամանակ ամենից
առաջ զննում են փողն ու փողատուփիք։

Գետք և նայել, թե չկա՞ արդյոք դրսի կող-
մից փողի վրա ժանդ, ճեղքվածք կամ ժանդի
կերուք։ Այդ բոլորը կարող են ազդել փողի
ամրության վրա։ Դրսից փողարերնի մասում
չպետք է վոչ մի տեղ լինի կորնթարդություն
(ուռուցք)։ Յեթե այդպիսի կորնթարդություն
լինի փողարերնի մասում, սվինը ճիշտ չի ամ-
րացմի փողին։

Փողարերնի շուրթին, այնտեղ, վորտեղ

փողը բոլորում ե, չպետք ե լինի վոչ մի ջարկ-
վածք, քերծվածք, վորը մետաղը ծոփ դեսի
փողի ներսը։ Այդ կվնասի հրաճգության դի-
պուկությանը և այդպիսի հրացանը պետք
ե վորքան կարելի յե շուտ արհեստանոցը
հանձնել։

Հետո զննում են հատիկը։ Այստեղ հար-
կավոր ե համոզվել, թե վորքան ամուր ե հա-
տիկը նստել իր հիմքում։ Դրա համար հարկա-
վոր ե մատով սեղմել հատիկին ձախ կողմից և
փորձել շարժել նրան իր տեղից։ Համոզվելով,
վոր հատիկն ամուր ե նստել, պետք ե նայել,
թե արդյո՞ք հատիկի վրայի խաղը համապա-
տասխանում ե նրա հիմքի վրա յեղած խաղին։
Յեթե համապատասխանում ե, ուրեմն հատի-
կը ճիշտ ե նստել իր տեղում։ Հատիկը չր-
պետք ե ծոված լինի կամ մաշված, նրա վրա
չպետք ե քերծվածքներ լինեն։ Վերջապես հա-
տիկը չպետք ե սպիտակած լինի ու չպետք ե
փայլի, այդպիսի հատիկը պետք ե սեացնել
կամ հրաճգությունից առաջ մրոտել։

Հատիկը կարելի յե դիտել նայելով նշա-
նոցի կտրունից։ Այդպիսով ավելի լավ կարելի
յե նկատել նրա ծովածքն ու ջարդվածքը։ Հա-
տիկի բոլոր անսարքությունները վատ կազդեն
հրաճգության դիպուկության վրա։ Մաշված,
ջարդված, տեղից շարժված լինելը, —բոլորն
ել այնպիսի թերություններ են, վորոնք փո-
խում են հատիկի ճիշտ դրությունն ու ձեր,
վորից գնդակները չեն համառմ, անցնում են
կամ շեղվում են նրանից։

Նշանոցը զննելու ժամանակ պետք է հրա-
ցանը վերցնել կրակի պատրաստ և յետ դցել
նշանոցի շրջանակը։ Հետո սեղմել անրիկի
մղլակները և ստուգել, թե չի ճոճվում տր-
դյոք նշանոցն աջ կամ ձախ։ Տեսնել թե ար-
դյոք կեղտ չկա աստիճանների, կտրունների և
դաճած թվանշանների վրա, —այդ տեղերում
սովորաբար կեղտ և կուտակված լինում։

Շրջանակը չպետք է շեղակի կամ ծոված
լինի։ Մեծ ծովածքները նկատվում են աչքով,
իսկ փոքրերը՝ նշանոցի անրիկով, վորը բըռ-
վածքից կանցնի հարվելով շրջանակին։ Նա
չպետք է վոլորված, մեղմված կամ լայնացած
լինի։ այդ թերությունները նկատվում են նրա-
նից, թե ինչպես ե շարժվում անրիկը շրջանա-
կի վրայով։ Թերությունների դեպքում շար-
ժումը համաչափ ու սահուն չի լինի։ Բացի
դրանից, անրիկը չպետք է ցնցումներից շարժ-
վի իր տեղից։

Նշանոցի պակասությունները նույնպես վը-
նասում են հրածդության դիպուկությանը։
Նշանոցի ծոված, մի կողմ թեքված շրջանակը
չեղում ե զնդակն այն կողմը, ուեալի վոր կողմը
թեքվել և կտրունը։ Մի կողմ թեքված հատի-
կը չեղում ե զնդակը հակառակ կողմը։ Վոլո-
րած, սեղմած կամ լայնացած շրջանակը, բա-
ցի դրանից, խանդարում և անրիկի ճիշտ
շարժմանը, դժվարացնում ե նշանոցի հաս-
տումը, ուրեմն և դանդաղեցնում ե հրածը-
դությունը։ Հատիկի և նշանոցի անսարքու-
թյունները կարող են վերացվել միայն արհես-
տանօթուամ։

Այնուհետև պետք է զննել փողանցքը ներսից:

Դրա համար հարկավոր ե բարձրացնել հըրացանը մինչև աչքի բարձրության, փողն ուղղվել դեպի լույսը և դիտել փողանցքը։ Գետք և այդ ժամանակ նկատի ունենալ, վոր փողանցքի ներու պարզ կարելի յե տեսնել միայն այն գեղագում, յերբ դիտվող մասը դոնվում է աչքից Յ-Կ վերշոկ տարածության վրա։ Ուրեմն դիտելով փողի միջին մասը, հարկավոր ե աչքը վորքան կարելի յե մոտեցնել փողին, և ընդհակառակն՝ յերբ զննում ենք փողարերնի մասը, կամ փամփշտանոցը, հարկավոր և գլուխը յետ տանել։

Փողանցքը զննվում է փոխեփոխ և՝ փողարերնի մասից և՝ փամփշտանոցի։ զննելիս պետք է փոխել լուսավորությունը, — զրա համար փողը պետք է բարձրացնել ու ցածրացնել և դարձնել զանազան կողմերը։

Փողանցքում կարող են լինել հետեւյալ թերությունները։

Ժանգ, կամ մետաղի կերպածություն։ Այդ նկատվում է, վորպես զանազան մեծության դորշ-կարմրավուն թեր կամ կետեր՝ հավաքված մի տեղ կամ ցրված փողանցքում։ Ժանգը գոյանում է նրանից, վոր հրացանն ուշուչ կամ վատ և մաքրվում։

Ժանգի հետքերը, վորոնք յերբեմն հաղիվ նկատելի յեն, գոյանում են փողի պատերը ժանգից մաքրելուց հետո։ Ժանգը մաքրվում է, իսկ հետքերը մնում են։

Ժանգի փոքր հետքերը չեն ապրում հրա-

ձգության վրա, բայց ամբողջ ժամանակ սկիտք և հետեւվել այդ հետքերին, վորովհետև մի փոքրիկ անփութության դեպքում չնորհիվ նրանց կարող ենոք ժանդ առաջանալ: Իսկ այն հրացանը, վորը ժանդուվել ե, այնքան լուրջ վնասված և համարվում, վոր յեթե ժանդի հետքերը խորն են, կարող ե ուղղվել միայն դործարանում:

Ժանդի ներկայությունը կարելի յե հայտաբերել մաքրելով փողանցքը խծուծով կամ մաքուր լաթով, վորոնց վրա ժանդը թողնում է կարմրավուն հետքեր: Փողանցքի փայլատ գույնը, յեթե մաքրելուց հետո լաթի վրա ժանդի հետքեր չեն մնում, թերություն չի համարվում:

Փողանցքի ժանդը կարող է կասեցնել դնդակի շարժումը, վորի պատճառով նրա պատույտն անհավասար կլինի, ոստի և ճիշտ լինի նրա թոփչքը:

Փողանցքում կարող են լինել և ֆերծը վացքներ (ճանկովածքներ): Նրանք գոյանում են անճշտապահ մաքրումից, յերբ մաքրիչի վրա փաթաթում են չափազանց փոքր ու բարակ լաթ, գոյանում են նույնպես փողանցքի մեջ ավաղից, փոշուց ու կեղտից: Այդ քերծը վացքները ճանաչվում, են փողանցքում յեղած մութ գծիկներով, խաղերով: Իսկ նոր քերծը վածքը փայլուն գծիկի ձև ունի, վորի յեղբերին նկատվում է մետաղի բարձրացում, կամ ինչպես ասում են, քցիմներ, ցլեպներ են լինում: Ֆերծվացքները չեն ազդում հրամգության վրա, սակայն նրանք վնասակար են նը-

բանով, վոր նպաստում են ժանդ գոյանալուն։
Փողանցքում կարող են լինել նաև ուստա-
ծություններ, վորոնք հայտաբերվում են
մուխ խոտորնակի ողերի (խիտ ստվերի) ձե-
վով, և կարող են լինել կամ անընդհատ ընդ-
հատումներով։ Այդ ստվերի խտությամբ կա-
րելի յե վորոշել նաև ուռածության մեծու-
թյունը։

Խիստ ուռած փողերը ճանաչվում են մի-
անգամայն անպետք, վորովհետեւ դնդակն
անցնելով փողանցքով և ընկնելով այդպիսի
ուռածության մեջ, կարող ե դուրս պրծնել
ակոսներից և կորցնել իր ճիշտ ուղղությու-
նը, կամ կարող ե սեպիել ակոսների մեջ, վո-
րից կարող ե փողի պայթյուն առաջանալ։

Ուռածությունը մեծ մասամբ տեղի յե
ունենում նրանից, վոր կրակելուց առաջ փո-
ղանցքն և ընկնում վորեւե կոշտ բան, մոռաց-
ված խծուծ, պատահաբար հրաձգության ժա-
մանակ դուրս թռած դնդակ, կամ փողաբե-
րանում մոռացված վորեւե խցան, վորով յեր-
բեմն ծածկում են փողաբերանը չափից ավելի
յեռանդուն հրացանածիդները։ Ուռածությու-
նը կարող ե առաջանալ նաև պատահաբար փո-
ղաբերանը ձյունով կամ ցեխով լցվելուց, կամ
խիտ յուղից։ Այդ պատճառով ել փողաբերա-
նը արգելվում է ծածկել վորեւե իրով, կամ
հրացանը կրել փողաբերանը դեպի ցած։

Վերջապես, վորը և ամենից հաճախ և լի-
նում փողաբերանում կարող ե լինել կեղու։
Փոշին ու վառողի այրուցքը հաճախ կուտակ-
վում են ակոսների անկյուններում, յերբ փո-

զանցքը վատ և մաքրվում, վորը և առանձնապես նպաստում է կեղտի առաջանալուն, իսկ հետո այդ կեղտը փոխվում է ժանդի:

Փամփշտանցը զննում են փողանցքի հետ: Նրա մեջ կարող են լինել նույն թերությունները, ինչ և փողանցքում:

Այնուհետեւ զննում են ագուատը: Ամենից առաջ նայում են, թե չի արդյոք ճեղքվածքներ և այնպիսի թերություններ, վորոնք կարող են խախտել աղուստի ամրությունը: Հարկավոր ե ստուգել, վորակեսզի շամփրի հենարանը ոլինդ նատած լինի իր բնում, հակառակ վեպքում շամփուրը կարելի յե հեշտությամբ կորցնել: Պետք ե նայել նույնպես, թե արդյոք ուղիղ և աղուստի փողակալը՝ դրա համար հարկավոր ե պարզապես տեսողության ճառագայթն ուղղել դեպի փողի փորակի կողերը: Յերբ փողակալը ծոված է, կարող ե ծըռվել նաև հավաքուծ հրացանի փողը, թեև յեթե առանձին դիտելու լինենք փողը, նա կարող ե և ուղիղ լինել:

Փողապատի զննության ժամանակ հարկավոր ե հատուկ ուշադրություն դարձնել, վորակեսզի նրա մետաղե ծայրապահակները չըճոճվեն և վորակեսզի փողապատում մեծ ճեղքեր չլինեն:

Փակադակի մասերը հարկավոր ե դենել առանձին-առանձին յուրաքանչյուր մաս դիտելով, վորակեսզի չլինեն քերծվացքներ կոթունի կատարի թեքաների վրա, կոթունի պատուտակածե կտրվածքի, պահպանիչ յելուսնի շարժման համար յեղած փոքրացի վրա և

նայել, թե արդյո՞ք մաքուր և կոթունի անցքը:
Կարող են ճեղվածքներ լինել մարտական
փակի պատկի վրա, կարող են տրուխած լինել
մարտական յելունները: Պետք է նայել,
թե կեղտ չկա՞ արդյոք մարտական թակի թա-
ռում, նետիչի տակ և թակի անցքում: Նույն
թերությունները կարող են լինել նաև հրահա-
նի պահպանական և պառակավոր յելուննե-
րի վրա, ինչպես նաև մարտական վոտքի վր-
րա: Յեթե այդ թերությունները կան, փակա-
ղակի մասերի համագործակցությունը խախ-
ովում ե:

Զարկանի, ինչպես նաև միացնող քանո-
նի ուղիղ լինելը ստուգվում և աչքաշափով:
Միացնող քանոնի վրա չքետք և լինեն քերծեր,
ցլեպներ, տրորվածքներ և այլն, քանի վոր
այդ կիսանդարի փակաղակի սահուն շարժմա-
նը: Զարկանը ծովում և կամ նրա ասեղը կո-
տրվում և ամենից հաճախ այն պատճառով,
վոր սխալ են հավաքում փակաղակը, յերբ հը-
րահանը պառական փակաղակն ուղղաձիգ
չեն բռնում, այլ թեքում են այս կամ այն կող-
մը: Այդ գեպքում զարկանի ասեղը մտնելով
փայտի հենարանի մեջ ծովում ե, իսկ յերբ
նա լավ և կոփված նաև կոտրվում ե:

Զարկանի ասեղը պետք և կլոր լինի և վոչ
թե սուր, այլապես նա կարող է ծակել փամ-
փշտի պատիճի տակը, իսկ այդ հրածգության
ժամանակ կարող է առաջացնել վառողային
գաղերի պոռթկում դեպի յետ:

Մարտական զսպանակը չպետք և խիստ
ծռված լինի, այդ նույնպես ստուգվում է աչ-

քով։ Մարտական զապանակի ուժը պետք է լինի մոտ 12-13 կիլոդրամ։

Մարտական պարագայքը դիտելիս պետք է ստուգել, թե արդյոք ուղիղ են պտուտակաները, չե՞ն փչացել, չե՞ն մաշվել արդյոք կըտրունները, չե՞ն պոկվել արդյոք գլուխները, չե՞ն մաշված արդյոք նրանց պտուտակավոր փորակները և վերջապես պտուտակավոր փորակում չկա՞ն արդյոք ցլեպներ կամ տրորվածքներ։ Այդ բոլորը կարող են ազդել պտուտակաների կանոնավոր աշխատանքի վրա և թուլացնել նրանց ամրությունը։

Չնելով պահեստատուիր նույնպես պետք է համոզվել, թե չկա՞ն արդյոք նրա վրա ցըլեպներ և ճմլված տեղեր, վորովհետեւ այդ թերությունները կարող են ազդել հրացանը լցնելու և փամփուշտները փամփշտանոցն ուղարկելու վրա։ Պահեստատուիր կողերը չպետք է ծոված, ներս ընկած, կամ դուրս պրծած լինեն, այլապես փամփուշտները պահեստատուիր գեղի փողատուին անկանոն կուղարկվեն և պահեստատուիր կիազ չի նստի առուստի համապատասխան կտրուքի մեջ։

Սվինի և շամփիրի զննությունը կատարվում է միայն հավաքած հրացանի վրա։ բայց շամփիրի ուղիղ լինելը ստուգվում է յուրաքանչյուր մաքջումից առաջ առանձին։

Սվինը զննելու համար հրացանը դրվում է ուղղաձիգ վոտքերի թաթերի միջև։ Ամենից առաջ ստուգվում ե, թե ինչպես ե սվինն ամրացված հրացանին։ Հագցնելով սվինը, հարկավոր է դիտել, վորպեսդի փակած անրիկի

Ժամանակ նրա ծակատը մնացած լինի աղաւա:
Պտտելով անրիկը, համոզվել, վոր նա պտըստ-
վում և սահուն, առանց վոստյունների և կիսպ
կպչում և սվինի փողակին: Անրիկը փակելիս
պտտացնել այնքան, մինչև վոր նա դեմ առ-
նի, իսկ յերբ դեմ առավ, սվինը պինդ կամ-
բացնի փողին: Ամրացման հուսալիությունը
ստուգելիս անհրաժեշտ և հետեւվել, վորպես-
զի, նա ամենեվին չերերա: Դրա համար բռնե-
լով սվինի լեստի մեջտեղից հարկավոր և փոր-
ձել սվինը շարժել այս կամ այն կողմը: Այդ
դեպքում վոչ յերկայնակի և վոչ կողքերի տա-
տանումներ չպետք ե լինեն: Սվինի մակերեսը
զննելու համար պետք է սվինը հանել և տես-
նել, թե չկա՞ արդյոք նրա վրա ժանգ, ճեղք-
վածքներ, կամ այլ պակասություններ, վո-
րոնք կարող են թուլացնել նրա ամրությունը:
Անհրաժեշտ և ստուգել թե արդյո՞ք ուղիղ և
սվինը: Եեթե այդպիսի թերություններ ունե-
ցավ սվինը, այդ կարող ե հսկայական ազդե-
ցություն ունենալ հրաձգության վրա: Անրի-
կի անսարքությունն այն հետեւանքը կունենա,
վոր սվինն ամուր չի փակվի հրացանի փողին,
սվինը կճոճվի, վորից հրաձգության ժա-
մանակ կառաջանա զնդակների մեծ ցրում, ու-
րեմն և կնվազի հրացանի դիպուկությունը: Աջ
կողմի ծռված սվինը կթեքի դնդակը դեպի
ձախ, իսկ ձախ կողմի վրա ծռված սվինը դըն-
դակը կթեքի դեպի աջ:

Շամփրի զննության ժամանակ հարկավոր
և հավաստիանալ, թե արդյո՞ք նա պահվում է
իր բնում: Այնուհետև յետ պտուտակելով

չամփուրը անհրաժեշտ և աչքաշափով ստուդել, թե արդյո՞ք նա ուղիղ է: Շամփիրի շարժումը շամփիրառվով պետք և ազատ լինի, բայց նա չպետք է այս ու այն կողմն ընկնի: Շամփիրի անսարքությունը չի ազդում հրաձըդության վրա, բայց հրացանը խնամելու համար նրա սարքին լինելը մեծ նշանակություն ունի, ծոված շամփիրով մաքրելը հարում է և վերջիվերջո միանգամայն անպետք դարձնում փողանցքը:

ԼՐԱՑԱՆԸ ՄԱՔՐԵԼԸ

Հրացանը մաքրելուց առաջ պետք է վարդորոք պատրաստել այն ամենը, ինչ անհրաժեշտ է և զննել պատկանելիքը:

Պտուտակիչի լեստը զննելիս պետք է հետեւիել, վորուցեսդի նա խիստ մաշված, ճանդոված, ծոված կամ կոտրտած չլինի: Պետք է զննել նրա կողերի կտրուճները, ինչպես նաև կողերը, վորոնք պետք է լինեն հարթ, առանց ցլեաների և ծովածքների: Պտուտակիչի լեստը պետք է ամուր նստած լինի կոթի մեջ:

Մաքրիչը զննելիս հարկավոր ե ստուգել, վորպեսդի նա լինի միանգամայն ուղիղ առանց ամենափոքր ծովածքի: Նրա գլուխը պետք է ազատ շարժվի կոթունի մասի վրա: Յեթե գըլուին ազատ չի շարժվում, կարող ե դժվարացնել փողանցքի մաքրումը, վորովհետեւ այդ դեպքում մաքրիչը չի կարող շարժվել ակոսներով: Կոթառի անցքում նույնպես չպետք է ծովածքներ լինեն, վորոնք կարող են խանգա-

բել շամփրի աղաս շարժմանը, յերբ մաքըը
վում և փողանցքը: Զողիկի վրա չեն թույլա-
տրվում ցլեպներ, մետաղի ծովացքներ ու
քերծվածքներ: Փողարերնի վրա հաղցրած
փողարերնի պահպանակը չպետք է յերերա:
Նրա վրա նույնպես ճեղքվածքներ չպետք է լի-
նեն: Փողարերնի պահպանակի վռանը չպետք
է մաշված լինի:

Հրացանը մաքըելու համար գլխավոր նյու-
թըն են լաթերն ու խծուծը: Լաթերը պետք է
լինեն կակուղ և մաքուր, առանց ավաղի, փո-
շու ու կեղտի: Նույնպես և խծուծը պետք է
մաքուր լինի, կոչտ մասերից աղատված: Խը-
ծուծի փոխարեն կարելի յե ունենալ խողի մա-
ղից խողանակներ կամ քամրակի թելեր: Բացի
դրանից, պետք է վաղորոք պատրաստել սուր
ծայրերով փայտիկներ, մաքըելու համար
ճեղքերը, փորակները և այլն:

Հրացանը, ինչպես դիտենք, յուղում են:
Այդ յուղը պահպանում է հրացանը ժանդից:
Հրացանը յուղելու համար գործ են ածում հա-
տուկ հրացանի յուղ: Բացի հրացանի յուղից
հարկավոր ե ձեռքի տակ ունենալ նաև նավթ
և ըշչելոկի քսուք: Զի թույլատրվում գործա-
գրել զանազան մետղե խողանակներ, փոշի-
ներ (պարաշոկներ), ինչպես նաև վաղորոք
յուղել լաթերը:

Եեթե հրացանը մնում է առանց գործադը-
րության, նա անպայման պետք է մաքըի առ-
նվազն շաբաթը մեկ անգամ: Շաբաթը մեկ ան-
գամից ավելի հաճախ մաքըելու հարկ չկա,
վորովհետեւ փոշի կուտակված չկ լինի մեծ

քանակությամբ, իսկ ավելորդ մտքրումն առաջ մաշում և հրացանը: Իսկ յեթե մարտիկը գտնվում է ուսուցման մեջ, պահակում և այլն, հրացանը հարկավոր ե մաքրել ամեն որ ծառայությունից վերադառնալուց անմիջապես հետո: Յեվ վերջապես մարտական կամ սին փամփուշտներով կրակելուց անմիջապես հետո հենց տեղն ու տեղը պետք ե մաքրել հրացանը: Յեթե այդ վորես պատճառով անհնար կլինի, հարկավոր ե գոնե փողանցքը յուղել: Ամառը հրացանը յուղում են հրացանի յուղով, իսկ ձմեռը նավթով: Մաքրումը պետք ավարտել առաջին իսկ հնարավոր դեպքում, բայց անպայման նույն որը:

Վորպես կանոն հրացանի մաքրելն ու յուղելը զորքերում կատարվում ե հրամատարական կազմի ներկայությամբ, իսկ դյուղերում՝ այդ անհրաժեշտ ե կատարել ռազմական անկյան վարիչի հսկողությամբ: Այդ անձինք ամեն անդամ պետք ե վորոշեն, թե ինչ չափով ե անհրաժեշտ կատարել քանդումը:

Այն դեպքում, յերբ հարկավոր ե սրբել, հարկավոր ե բաժանել սվինը, հանել շամփուրը, փակաղակը և պահեստատումին կափարիչը:

Հրաձգությունից հետո քանդելը նույնն է: Բայց յեթե անձրեւ ե յեկել և փողապատի տակը կարող ե ջուր ընկած լինել, պետք ե բաժանել նաև փողապատը: Իսկ յեթե հրացանը հիմնովին թրջվել ե անձրեվից, որինակ՝ մի քանի որվա յերթից հետո և այլն, անհրաժեշտ ե բոլոր մասերը լրիվ քանդել, մաքրել և յուղել: Իսկ յեթե ագուստի ու փողապատի փայ-

տը խոնավացել ե, նրանց փողից չպետք ե բա-
ժանել, մինչև չորանալը։ Այդպիսի ժամանակ
նրանց հարկավոր ե պահել չոր շնչում, բայց
վոչ արեի տակ ե վոչ վառարանի մոտ, այլ
կերպ այդ մասերը կարող են ծովվել։

Հրացանը մաքրելու համար պարագայքը
պատրաստվում է հետեվյալ ձեզով։ Շամփրի
վրա ներքեվի ծայրից, վորն ունի պտուտակա-
ձե փորակ, ոկզրում հաղցնում են շամփրի
կոթունը, իսկ նրա յետելից նույն ծայրից՝ փո-
ղաբերանի պահպանակը։ Այնուհետև շամփրի
նույն այդ պտուտակաձե ծայրի վրա պտու-
տակվում ե մինչեւ դեմ առնելը մաքրիչը, իսկ
շամփրի կոթմառի ծակի մեջ անց ե կացիում ձո-
ղիկը, շամփրի դլիսի վերելից, և հրացանը մաք-
րելու համար պարագայքը պատրաստ ե։

Փողանցքի մաքրումը կատարում են այս-
պես։ Հարթելով խծուծը, կամ բամբակի թելե-
րը և ծալելով այն յերկուտակ, հավասար
փաթաթում են մաքրիչի ակոսների վրա ըստ
հնարավորին հաստ շերտով, միևնույն ժամա-
նակ մատներով պտտելով մաքրիչը։ Նույնպես
փաթաթում են և լաթերը։ Փաթաթելով մա-
քրիչի վրա խծուծը կամ լաթերը հարկավոր և
հետևել, վորպեսզի մաքրիչը մտնի փողանցքի
մեջ մի փոքր ուժով և փաթաթանն ամբողջո-
վին լցնի փողանցքի ակոսները։

Կարելի յե խծուծը կամ բամբակի թելերը
չփաթաթել մաքրիչի ակոսների վրա, այլ ուղ-
ղակի հաղցնել մաքրիչի վրա, այնպես, վոր
բոլոր չորս ծայրերն ել ազատ մնան (շրջադ-

գետի ձեվով)։ Այդ ժեմն առանձնապես շավ և
այն պատճառով, վոր հնարավորություն և
տալիս լավ մաքրել փողանցքի ակոսները։

Յեթե հրացանի մաքրելը կատարվում է
հրաձգությունից հետո, փաթաթած խծուծը
կամ լաթը պետք է խխմել նավթով այնպես,
վոր նա տամուկ լինի և վոչ թե թաց։ Յեթե
փողանցքի մեջ ժանդ կա, խծուծն անպայման
պետք է խխմել յուղով։ Խծուծը գործադրո-
վում է հրացանի փողանցքն ու փամփշտանոցը
մաքրելու և յուղելու համար, իսկ լաթերը դոր-
ծադրվում էն հրացանի դրսի մասերը սրբե-
լու համար։

Յերբ ամեն ինչ պատրաստված է, հրա-
ցանը պետք է ուղղաձիգ դնել ծնկների միջև,
շամփուրը մտցնել փողանցքի մեջ և առաջ
տալ մինչև փողանցքի յերկայնության կեսը։
Ապա պետք է առաջ քաշել և ամրացնել փողի
վրա փողաբերանի պահպանակը, այնպես,
վոր նա իր տեղից չշարժվի մաքրելու ժամա-
նակ։ Դրա համար հարկավոր է նրան դարձ-
նել այնպես, վոր հատիկը մտնի ողակաձև փո-
րատի մեջ։ Այնուհետև հարկավոր է հրացա-
նը թեքիլ կոթով դեպի առաջ, մի բանի դեմ
տալ, ձախ ձեռքով բռնել փողի առջևի մասից
և շամփուրը սահուն կերպով շարժել դեպի
առաջ ու յետ փողանցքի ամբողջ յերկայնու-
թյամբ։ Յերկու-յերեք անգամ այդ կատարե-
լուց հետո, հարկավոր է փոխել խծուծը, նո-
րից սրբել և այդպես շարունակել այնքան,
վոր խծուծի վրա վոչ կեղտ, վոչ կարմրու-

թյուն, վոչ ժանդի անդի փառ մնա, այլ Անդ
միայն մետաղի կապտություն:

Պետք չե շատ ուժեղ և յերկար չփել փո-
ղանցքը, վորպեսզի նա փայլի, այդ լավ չե.
Ժանդն այդպիսով չես հանի, յեթե նա շատ ու-
ժեղ ե: Այն հրացանը, վորի ժանդը հիշյալ
ձեվով չի մաքրվում, պետք ե հանձնել զենքի
արհեստանոցին:

Մաքրելու ժամանակ կարող ե պատահել,
վոր մաքրիչն ու շամփուրը լուվեն փողանց-
քում ու դուրս չդան: Այն ժամանակ պետք
չե մեծ ջանքեր գործ դնել շամփուրը յետ քա-
շելու կամ առաջ տալու համար, հարկավոր ե
միայն մի քիչ տաքացրած յուղ ածել և մի
յերկու բուքե հանդիսատ թողնել հրացանը: Դը-
րանից հետո պետք ե կրկին փորձել յետ քա-
շել շամփուրն ու մաքրիչը: Յեթե դրանից հե-
տո յել շամփուրը մաքրիչի հետ դուրս չի
դալիս, կամ մաքրիչը շամփորից յետ ե պտու-
տակվել ու միայն շամփուրն ե դուրս դալիս,
այդպիսի հրացանը պետք ե ուղարկել զենքի
արհեստանոց:

Փողանցքը մաքրելը վերջացնելուց հետո
պետք ե հանել փողաբերնի պահպանակը և
նույն ձեւով սրաել փողաբերանը, վորը մաք-
րված չեր այն պատճառով, վոր խծուծը դեմ
եր առել փոցտբերնի պահպանակին:

Փամփշտննոցի մաքրելը կատարվում է
նույնպես շամփորով ու մաքրիչով, վորի վրա
փաթաթված ե խծուծ, մաքրվում ե նույն
կարգով, ինչ և փողանցքը: Յեթե կա լցա-
մասի պահպանակ (հատուկ ձեի փայտե փո-

զակ՝ վերից բաց), այդ պահանակը հարկա-
վոր ե դնել պահեստատուիի մեջ և նրա մի-
ջոցով շամփուրն անցկացնել փամփշտանոցը:

Վերջացնելով փամփշտանոցի մաքրելը,
պետք ե համոզի վրա փաթաթել, վորպեսդի կեղտ չմնա
գնդակի մուտքում, փողատուիի յերկայնա-
կի և ողսկածե փորատներում ու նետիչի փո-
րատում:

Փողանցքն ու փամփշտանոցը մաքրելուց
հետո հարկավոր ե մաքրիչի վրա փաթաթել
լաթ, լաթը թեթև յուղել և սահուն մտցնելով
շամփուրը փողանցքի մեջ, թեթև, բարակ
շերտով, և հավասարաչափ յուղել ակոսներն
ու առերը, ինչպես նաև փամփշտանոցը, թե-
քատի ու գնդակի մուտքի հետ:

Հրացանի մնացած մասերը մաքրվում են
հետեյալ ձեռվ: Փողատուիը պետք ե սրբել
չոր լաթերով և ապա յուղել յուղով խխմած
լաթով: Անկյունները, ճեղքերը, ծակերը և
ծալքերը պետք ե մաքրել սրած փայտիկ-
ներով:

Փողը, նշանոցն ու հատիկը, ինչպես նաև
մնացած մետաղե մասերը պետք ե մաքրել
նույն կարդով, ինչ և փողատուիը: Փողը
մաքրելիս հարկավոր ե ուշադրություն դար-
ձնել այն տեղի վրա, վորտեղ փողն ու փողա-
տուիը շփում ունեն ազուստի հետ, քանի վոր
այդտեղ ժանդը հեշտ ե դոյանում:

Մնացած մետաղե մասերը մաքրելիս ոդ-
տվում են լաթերով, իսկ վորտեղ պետք ե՝
փայտիներով: Վայրիջույց մեխանիզմը,
պահեստատուիի կափարիչն ու տվիչ մեխանիզ-

Ֆը, զատիչ-անդրադարձիկը և փակագակը
պետք է քանդել միայն ծայրահեղ կարիքի
դեպքում։ Փակագակն առանց քանդելու մաք-
րելու ժամանակ պետք է յետ քաշել հրահանը։

Ազուսան ու փողապատը պետք է սրբել,
չորացնել առանց յուղի։ Յեթե խոնավացած
են, հարկավոր և առաջ չորացնել վողի վրա,
այլ կերպ նրանք կծովեն։

Յերբ հրացանի բոլոր մասերը մաքրված
են, հարկավոր և հավաքել հրացանը և ապա
սրբել ավելորդ յուղը։

Սրգելվում է հրացանն առատ յուղել, վո-
րովհետեւ յուղը ցուրտ ժամանակ սառչելով,
ավելորդ յուղը կարող և պատճառ դառնալ
անկանոն դործողության և դլխավորապես ա-
ռաջացնել փառոց։

Զպետք և մաքրած հրացանը բռնել քըրտ-
նած ձեռքով, քանի վոր քրտնած ձեռքերի
հետքերը նպաստում են ժանդ գոյանալուն։
Վերջապես հարկավոր և զննել, թե արդյո՞ք
հրացանի վրա վորեւ տեղ փոշի, ալազ և
այլն չի նստել, սրբել հրացանը և ապա մաք-
րել պատկանելիքը։

ՀԻԱՑԱՆԻ ԶՆՆԵԼԸ ՀԱՎԱՔՎԱԾ ԶԵՎՈՎ.

Հրացանը մաքրելուց և հավաքելուց հե-
տո հարկավոր և անպայման ստովել, թե ար-
դյո՞ք նա ճիշտ և հավաքված և ինչպես և աշ-
խատում նրա մեխանիզմը։ Սկզբում կատար-
վում է դրսի զննություն։

Դրա համար անհրաժեշտ և ամենից առաջ

զննել պարտպայքը։ Պետք ե համոզվել, թե
չե՞ն ծովելարդյոք ողերը, ճիշտ են արդյոք
նրանք ամրացված ե կիս պահո՞ւմ են արդյոք
փողն ու ադուստը։ Այդ ողերը պետք ե պտու-
տակված լինեն հավասարաչափ, բայց վոչ
ամուր, յեթե նրանք շարժական են, և վոչ ել
թույլ։ Պետք ե զննել՝ հուսալի՞ յէ արդյոք
պահվում փողատուփը փողի վրա և չկա՞ն ար-
դյոք նրա վրա մեծ ճեղքեր։

Այսուհետեւ հարկավոր ե ստուգել, թե
արդյո՞ք ճիշտ են պտուտակաված պոչի ու հե-
նարանի պտուտակները։ Յեթե մինչեւ վերջ
չի պտուտակված պոչի պտուտակը, դրանից
ազատ չի շարժվի հրահանը։ Իսկ յեթե հե-
նարանի պտուտակը պտուտակված ե շափից
դուրս, այդ կարող ե պահեստատուփի ան-
կյունը բաժանել նրա կողերից, վորն աչքով
նկատելի կլինի։

Հետո հարկավոր ե համոզվել, թե ար-
դյո՞ք հրացանի մակերևույթի վրա չի մնացել
չմաքրված ժանդ, չկա՞ արդյոք խոր ճանդը ո-
վածքներ կամ ջարդվածքներ, չկա՞ն արդյոք
ճեղքեր ադուստի ու փողապատի վրա, չա-
փից դուրս չի՞ ձգված արդյոք հրացանի փոկը։
Յեթե կարելի յե ներքին ողի մոտ փողակալի
ու փոկի միջև անց կացնել յերկու մատը, ու-
րեմն փոկը ճիշտ ե ամրացված։

Այդ ձևով զննելով հավաքված հրացանը
և համոզվելով, վոր ամեն ինչ կարգին ե,
հարկավոր ե մի անդամ ևս ստուգել, թե տե-
ղահան չի՞ յեղել արդյոք հատիկը կամ նրա
վրա չկա՞ն արդյոք ջարդվածքներ։ չի՞ ճոճվում

արդյոք, կամ ծռված չե՞ն նշանոցի շրջանակը, պի՞նդ և պտուտակված արդյոք շամփուրը, ամո՞ւր և արդյոք սվինի անբիկը, պի՞նդ և փոկված արդյոք փակաղակը և իջեցված և արդյոք հրահանը։ Լա՞վ և արդյոք փակված պահանատուփը, չի՞ շարժվում արդյոք սվինը։ Յեթե լինի այդ անսարքություններից մեկն ու մեկը, հրացանը դիպուկ չի կրակի։

Հրացանի հավաքման հետագա ճշտությունը ստուգվում է այսպես։ Նրանից հետո յերբ բացում են պահետատուփը, պետք է աջ ձեռքի ցուցամատը զնել լծակի վերջին ծայրի վրա, իսկ բութ մատով սեղմել տվիչ մեխանիզմի վրա և փորձել հանել կափարիչը սունակից։ Նա այդ դեպքում պետք է ազատ պտտվի, բայց դուրս չգտա և միայն տվիչ մեխանիզմի լրիս սեղմելուց հետո կափարիչը պետք է դուրս գտա սունակից։

Հետո զննում են փակաղակը։ Ամենից առաջ հարկավոր է հավաստիանալ, թե արդյո՞ք ճիշտ և նա աշխատում։ Հրահանը պետք է իջնի ազատ, առանց հաօպաղումների և վորոշակի զարկ առաջացնի։ Հրահանի վոչ ազատ հրահանի պատճառները կարող են լինել մինչեւ վերջ չպտուտակած պոչի պտուտակը, հրահանի կատարի վրայի կամ փողատուիի փորատի միջի քերծերն ու ջարդվածքները, անսարք մարտական զսպանակը, կոթունի ու մարտական փակի անցքերի միջի ժանգն ու թանձրացած յուղը կամ կեղտը։ Հրահանի շարժումը դժվարացնող պատճառը ճիշտ կարելի յե իմանալ, միայն նորից քանդելով փա-

կրտղակը և մանրամասնորեն զննելով նրա առանձին մասերը:

Այնուհետև պետք է զննել հրահանի ասեղը: Դրա համար պետք է վերցնել պտուտակիչը և զննել կտրունները մարտական փակի վրա և տեսնել թե արդյո՞ք հրահանի ասեղը անցնում է պտուտակիչի ավելի խոր կտրունի միջից: Հրահանի ասեղը ճիշտ կաշխատի միայն այն գեղագում, յերբ նա ազատ անցնում է պտուտակիչի ավելի խոր կտրունից և չի անցնում ավելի սաղրից: Պտուտակիչի հենց այդ կտրուններն են, վոր վորոշում են, թե ինչ չափով պետք է անցնի հրահանի ասեղը:

Զննելով այդ ձեռվ փակաղակը, հարկավոր և փակաղակը զնել փողատուփի մեջ ու փակել: Այնուհետև բացել փակաղակը, վերցնել մի պահունակ վարժական փամփուշտ, լցնել նրանցով հրացանը, փակել փակաղակը և իջեցնել հրահանը: Բացելով ու փակելով փակաղակը, հարկավոր և դուրս նետել բոլոր հինգ փամփուշտները: Դրանից հետո պետք է փակել փակաղակը և փորձել հրահանը զնել մարտական վոտքի վրա և մատով սեղմելով հրահանի կոճակը, ստուգել, թե արդյո՞ք ամուր և պահում ձգանի զսպանակի ատամը հրահանն այդ դրությամբ: Այնուհետև հրահանը սլետք և զնել պահպանական վոտքի վրա և կրկին ստուգել նրա ամրությունը:

Այդ նվազները կատարելիս հարկավոր և հետեւ փակաղակի և հրացանի այլ մասերի ճիշտ գործողությանը: Այդ ժամանակ պետք է նկատել հետեւյալը: Փակաղակը պետք

դրվի միանդամայն ազատ առանց հոգաղման
և առանց շիման։ Փակաղակը պահստատուիի
մեջ կարող ե դժվար մտնել նրանից, վոր ձը-
գանը յետ տալու ժամանակ փակաղակակալին
ու ձգանի զսականակի տառամը բավականաչափ
խոր չեն նստում փաղատուիի ձգանի ճեղքի
մեջ։

Բացի գրանից, փակաղակի ու պահեստ-
ատուիի վրայի ջարդվածքները նույնակա-
խանդարում են փակաղակի ազատ շարժման։

Իսկ ինչպես և շարժվում փողատուիի մեջ
փակաղակը, ինչպես և նու հանգում ու փակ-
վում։

Շուր գալիս, ինչպես նուև յերկայնակի
յետ ու առաջ շարժելիս, փակաղակը պետք է
պահեստատուիում շարժվի հեշտությամբ, ա-
ռանց խափանումների։ Արագ և ուժեղ յետ
տալու ժամանակ փակաղակը չպետք է դուրս
պրծնի. փողատուիից։ Զգանի պոչին ուժեղ
սեղմելիս փակաղակը պետք է ազատ դուրս
գա փողատուիից։

Փակաղակը բանալու համար շուր գալը
պետք ե հեշտ ու սահուն լինի։ Փակաղակի
դժվար շուր զալը կարող ե տեղի ունենալ
կեղտից, վորը կուտակվում ե փողատուիի
անցքերում և փակաղակի մասերի վրա, ժան-
դից, ավաղից ու թանձրացած յուղից։

Յեթե մարտական զսականակը ծոված ե,
կամ թույլ ե պտուտակված պոչի պտուտակը,
փակաղակը դժվարությամբ շուր կդա։ Պոչի
պտուտակը յեթե շատ թույլ ե պտուտակված,

կարող ե բալորովին լիթողնի, վոր բացզի
փակաղակը:

Վերջապես կոթունի, փակաղակի ու հր-
բահանի շփվող պտուտակավոր մակերեսների
անհարթություններն ու ջարդվածքները դըժ-
վարացնում են, իսկ յերբեմն անհնար են
դարձնում հրահանի շարժումը փակաղակի
կոթունի վրայով։ Յերբեմն այդ շփումն այն-
քան մեծ ե լինում, վոր փակաղակը չի բաց-
վում մինչև իսկ մեծ ջանքեր դործ դնելուց։
Այդ գեղքում հարկավոր ե հրահանը կոճա-
կից յետ տանել և այն ժամանակ բացելով փա-
կաղակի կոթունը, յուղել նրա պտուտակա-
վոր մակերեսույթները։

Յերբեմն դժվարացած ե լինում նաև փա-
կաղակի յերկայնակի շարժումը փողատու-
փում, վորը կարող է տեղի ունենալ փողա-
տուփի անցքում, կամ փակաղակի մասերի
վրա յեղած քերծերից ու ճանդովածքներից։

Փակաղակի մասերի տնբայլարար ջոկելը
կարող է լինել այն գեղքում, յերբ հրացանի
վորեւ մասը մաշվածության պատճառով փո-
խել են նոր մասով, կամ միաժամանակ քան-
դած են յեղել մի քանի հրացան և նրանց մա-
սերը խառնել են։ Այդ կարելի յե վորոշել ար-
դեն արհեստանոցում։

Յեթե միացնող քանոնը ծոված ե, կամ
նրա յերկնիղը չոված ե, յեթե կեղտ ե կու-
տակվել փողատուփի անցքում, և զերջապես
յեթե ուստիկ ամուր են պտուտակված պոչի
ու հենաբանի պտուտակները, — այդ բոլորը

կարող են ազդել փակաղակի յերկայնուկի
շարժման վրա:

Փակաղակի շարժումն ստուգելիս պետք է
հավաստիանալ, թե արդյո՞ք դուրս չի պըրծ-
նում փակաղակը փաղատուփից: Դրա համար
պետք է արագ և ուժով յետ քաշել փակաղակը
լրիվ մինչև վերջ, և նա այդպես քաշելու
դեպքում անդամ պետք է ամուր տաճկի փա-
ղատուփում: Նա ազատ պետք է դուրս դա
միայն այն գեսլքում, յեթե սեղմում ենք ձգա-
նը մինչև դեմ առնելը:

Իսկ փակաղակի դուրս պըրծնելը փողա-
տուփից, կամ հրացանը կրելիս նրա վայր
ընկնելը պատահում և նրանից, վոր ձգանի
զսպանակի պտուտակը լավ չե պտուտակված,
կամ փակաղակակալը ծոված և կամ ջար-
դված, կամ վերջապես ձգանի զսպանակը թու-
լացնել և ու ծովել: Ձգանի սոնակի բարակ
լինելը նույնպես կարող ե, պատճառ դառնալ,
վոր փակաղակն ինքն իրեն վայր ընկնի:

Պահեստատուփը լցնելիո հարկավոր և
նկատի ունենալ, վորսեսզի փամփուշաներով
պահունակն ազատ մտնի փողատուփի խոտոր-
նակ փորատների մեջ: Այդ փորատներում
չպետք և լինեն ծովածքներ, քերծեր և այլ
թերություններ: Փամփուշտները պետք ե ա-
ռանց դժվարության մտնեն պահեստատուփի
մեջ և նրանց պետք ե պահի զատիչ-անդրա-
դարձիկի զատիչ ատամը:

Խափանումներն այդ դեպքում տեղի յեն
ունենում մեծ մասամբ պահունակի թերու-
թյունների հետևանքով: Պահունակը կարող է

աղատ չմտնել, պահունակի թաթիկները ծըռ-
ված լինելու, նրա վրա ժանդ լինելու կամ
փողատուփի փորատներում քերծվածքների
պատճառով։ Կարող ե պատահել նաև, վոր
փամփուշտները պահունակից դժվարությամբ
մտնեն պահեստատուփիը։ Յեթե պահունակ-
ները ծոված են, նրանց թաթիկներն ու կո-
ղերը չոված են, փամփուշտներն այս ու այն
կողմը կցըզեն, ուստի և պահեստատուփի
լցնելը կկատարվի խափանումներով։

Պահեստատուփի մեջ փամփուշտների դըռ-
վար իջնելու վրա աղղեցություն և ունենում
նաև զատիչ անդրադարձիկի վոչ ազատ շար-
ժումը, նրա ճեղքի կեղտոտվելը կամ յերբ
նրա թաթը դեմ և առնում ազուստին։ Վեր-
ջինս տեղի յե ունենում ազուստի փայտն ուռ-
չելուց։ Վերջապես պահեստատուփի կողերը
կարող են ծոված լինել դեպի ներս։

Փամփուշտները կարող են չպահվել զա-
տիչ-անդրադարձիկի զատիչ ատամով, իսկ
յերբեմն գնդակի դդակը կարող ե ազատ ցած
ընկնել, առանց զատիչ անդրադարձիկին դեմ
առնելու։ Այդ կարող է լինել զատիչ անդրա-
դարձիկի զապանակային մասի թուլանալուց,
կամ նրա ատամը կարճ լինելուց կամ զատիչի
պտուտակը լուվ պտուտակված չլինելուց։

Յերբեմն լինում ե նաև, վոր փամփուշտը
լովում ե, յերբ փամփշտանոցը միանգամից
դալիս են մի քանի փամփուշտ։ Պատահում ե,
վոր հերթական փամփուշտը լովում ե իր
պոռանկով զատիչի թաթի և փողատուփի աջ

կողի միջև։ Այդ աեղի յեւ աւնենում միայն
շատապ լցնելուց։

Հերթական փամփուշտը կարող ե լովել
նաև փողասուփի պատուհանի յելունի մոտ,
սխալ գրած զատիչ անդրադարձիկի պատճա-
ռով։ Այդ կարելի յեւ վերացնել, մատով առաջ
տալով փամփուշտը, բայց այդ անելու համար
անպայման անհրաժեշտ է փակաղակը յետ
տանել մինչև դեմ առնելը։ Հակառակ դեպ-
քում յերկրորդ անդամ փամփուշտը փամփըշ-
տանոցը տալու ժամանակ կարող են լովել
միանդամից յերկու փամփուշտ։

Պատահում ե, վոր մարտական փակը չի
բռնում հերթական փամփուշտի զդակի պը-
ռունկը ե անցնում ե նրա վրայից։ Այդ ժամա-
նակ առաջ քաշած փամփուշտը ներս ե ընկ-
նում իր զդակով պահեստատուփի միջին մա-
սը։ Այդ պակասությունը վերացնելը շատ
հեշտ ե։ Հարկավոր ե միայն յետ քաշել փա-
կաղակը ե վերեկից սեղմել փամփշտի դըն-
դակի վրա։

Փամփուշտաները փողատուփից փամփըշ-
տանոցն ուղարկելու համար նույնպես կա հա-
տուկ կարգ։

Փակաղակի առաջ շարժվելու ժամանակ
վերեկի (հերթական) փամփուշտի պետք է
շարժվի առաջ աղատ ե առանց խավանում-
ների։

Բայց ահա փամփուշտը չի մտնում փամ-
փըշտանոցն ինչպես հարկն ե, այլ դեմ ե առել
փողի արմի ներքին մասին կամ ողաճն փո-
քատին։ Այդ կարող ե պատահել փողի արմի

կտրվածքի վրա յեղած խորտերից։ Այդ վերացնելու համար հարկավոր ե փակադակը յետ տանել, վորն իր մարտական փակով յետ կքաշի փամփուշտը։

Փամփուշտը կարող ե լովել նաև պատռւանի առջեսի մասին կամ պահեստատուիին։ Այդ առանձնապես հաճախ ե պատահում, յերբ ոգտվում են վարժական փամփուշտներով, վորովհետեւ նրանց քաջն ավելի պակաս ե մարտական փամփուշտներից։ Այստեղ արդեն դործին ողնելին ավելի դժվար ե։ Լավ ե, յեթե այդ տեղի յեւ ունեցել հենարանի պատռակը մինչև վերջ չպտուտակելուց։ Այն ժամանակ հարկավոր ե միայն լավ պտուտակել այն։ Բայց փամփուշտը կարող ե լովել նաև այն դեպքում, յերբ պահեստատուիը տվիչ մեխանիզմի հետ ցածրացել ե, կամ ճիշտ չեղործում տվիչ մեխանիզմը։ Այդպիսի անսարքության դեպքում հրացանը պետք ե տանել արհեստանոց։

Հրահանը մարտական վոտքի վրա դնելը։ Մարտական վոտքի վրա դրած հրահանը պետք ե ամուր պահպի ձգանի ղսպանակի ատամով այնպես, վոր նրա իջեցումը տեղի ունենա վոչ թե ձգանին մատով թեթև դիպչելուց, այլ վորոշ ջանք (ուժ) դործ դնելուց։

Բայց կարող ե պատահել նաև, վոր ձգանի ատամը չի պահում հրահանը մարտական վոտքի վրա և այն ժամանակ, իհարկե, այդպիսի հրացանից կրակել չի լինի։ Այդ կարող ե պատահել նրանից, վոր ձգանի ղսպանակի պտուտակը թույլ ե պտուտակված, ձգանի

զսպանակը թուլացել և կամ ծռվել, մարտական վոտքի առջեի շուրթը ջարդվել և, ձգանի զսպանակի ատամը մաշվել և կամ սղոցվել և վերջապես ձգանի զսպանակի ատամը բավականաչափ դուրս չի դալիս փողատուփի հատակի տակից :

Նույն այդ պատճառներով, ինչպես նաև թույլ մարտական զսպանակից, թանձրացած յուղից, քերծվածներից ու մետաղի վոլորտից ձգանի ճեղքում, հրահանի իջեցումը կարող է շատ թույլ լինել և բավական և մատով թեթև դիպչել ձգանին, վորպեսզի ձիդ առաջանա :

Կարող ե լինել և հակառակը, յերբ հրահանի իջեցումը չափազանց ծանր և լինում և կրակելու համար հարկավոր և լինում չափազանց ուժեղ և յերկար սեղմել ձգանի վրա : Այդ տեղի յե ունենում ձգանի կամ մարտական չափազանց ուժեղ զսպանակներից, կամ այն դեպքում, յերբ հրահանի մարտական վոտքի առջեի կողը կամ ձգանի զսպանակի ատամի յետեի կողը բավականաչափ բութ չեն կամ նրանց վրա կան մետաղի քերծվածքներ ու ջարդվածքներ : Պարզ ե, վոր այդ թերությունները կազդեն հրածգության դիպուկության վրա : Թույլ իջեցման ժամանակ հրացանաձիգը ժամանակ չի ունենա ինչպես հարկն ե նշան բռնել, իսկ ձիդն արդեն կատարված կլինի : Իսկ ծանր իջեցման ժամանակ, յերբ հրացանաձիգը յերկար և ուժեղ քաշի ձգանը, հրացանը կթեքվի դեպի ցած և այդպիսով կխախտվի նշանառության դիմք :

Այն անսարքությունները, վորոնք տեղի

յեն ունենում ծովածքից, Մաշվածությունից
կամ ջարդվածքից, սեփական ուժերով վե-
րացնել չի կարելի, և հրացանը հարկավոր և
ուղարկել արհեստանոցը։ Իսկ յեթե հրահանը
մարտական վոտքի վրա չի կանգնում այն
պատճառով, վոր մինչև վերջ պտուտակված
չեն պտուտակները, կամ յուղը հավաքվել ե,
այդ կարող ե վերացնել ինքը հրացանաձիգը։

Յերբ հրացանաձիգը հրահանը դնում է
պահպանական վոտքի վրա, նա պետք է գի-
տենա, վոր հրահանը յետ քաշելու ժամանակ
նա պետք է շարժվի սահուն, իսկ ձախ դար-
ձնելու ժամանակ պահպանական յելունը
պետք է մտնի փակաղակի կոթունի փոքր փո-
քոքի մեջ, շնեպվելով նրա մեջ։

Իսկ պատահում ե նաև, վոր հրահանի
յելունը սեպվում ե փակաղակի կոթունի փոքր
փորոքի մեջ և հրահանի մարտական վոտքը
չի հասնում մինչև փողատուիի հարկավոր
յելունին։ Այդ լինում ե նրանից, վոր հրա-
հանի պահպանական յելունի վրա լինում են
ջարդվածքներ կամ քերծվածքներ կամ ազուտ-
ի փայտի պոռունկը դուրս ե ցցվում փոզա-
տուիի պատուհանի կողի վրա։

Յերբեմն պատահում ե, վոր փակաղակը
բացվում ե, թեև հրահանը դրված է պահ-
պանական վոտքի վրա։ Այդ լինում ե այն
ժամանակ, յերբ ջարդվել ե կամ սաստիկ
մաշվել ե հրահանի պահպանական յելունը
կամ պահպանական յելունի համար փակա-
ղակի կոթունում յեղած փորոքը։

Վերջապես հրացանաձիգը պետք է գիտ-

տենա, թե ինչ պատճառներ են խանգարում
կրակած պարկուճները փողատուփից դուրս
գցելուն և ինչից են առաջանում փստոցները:

Փակաղակը բացելիս ու յետ շարժվելիս
պարկուճը կամ փամփուշտն իր գդակով պետք
է ամուր նստած լինի մարտական փակի մեջ և
պետք և շարժվի փակաղակի հետ միասին:
Փամփուշտները փողատուփից յետ գցելը փա-
կաղակն արագ յետ քաշելու ժամանակ պետք
և լինի կտրուկ և ուժեղ:

Պարկուճը կարող է մնալ փամփշտանո-
ցում, յեթե նետիչի կեռիքը դուրս պլրծնի
փամփշտի պոռւնկից: Իսկ կեռիքը կարող է
դուրս պլրծնել այն ալատնառով, յեթե նա կարճ
է, կամ նրա ծայրը մաշված և և կամ նետիչի
տակ կա կեղտ, վորը խանդարում է կեռիքին
ինչպես հարկն և բռնել պոռւնկից:

Այդպիսի դեպքերում ավելի լավ է ըս-
կըզրում փորձել արակուճը կամ փամփուշտը
հանել մի ուրիշ հրացանի փակաղակով: Իսկ
յեթե այդ դեպքում ել չհաջողվի, հարկավոր
և դուրս հրել շամփուրով և յերկու մաքրիչով,
վորոնցից մեկը նախապես դցում են փողի մեջ,
իսկ մյուսը պտուսակում շամփրի վրա: Սե-
փական փակաղակն այդ դեպքում հարկավոր
և քանդել և զննել, թե արդյոք չկա՞ն այն ան-
արքությունները, վորոնց մասին մենք խոսե-
ցինք վերեւում:

Պարկուճները յերբեմն դժվար են դուրս
դալիս նաև արագ կրակելու պատճառով փողի
շիկանալուց: Վորսեսզի այդ տեղի չունենա,
յուրաքանչյուր 20 ձիդից հետ հարկավոր և

յուղել փամփուշտները կամ փամփշտանոցը
յուղով կամ նավթով:

Պարկուճները թույլ են դուրս ձգվում այն
պատճառով, վոր զատիչ-անդրադարձիկի զըս-
պանակը թույլ ե կամ զատիչ-անդրադարձիկի
պտուտակը մինչև վերջ չի պտուտակված:

Փստոցներն առանձնապես հաճախ տեղի
յեն ունենում նրանից, վոր փակաղակի մասե-
րը շատ առատ են յուղված. այդ յուղն ավելի
ես թանձրանալով ամառը փոշուց, իսկ ձմեռը
սառչելուց դժվարացնում են զարկանի շար-
ժումը: Այդ պատճառով փակաղակի մասերը
պետք ե սրբել յուղով քիչ խսմած լաթով:
Յեթե վորեն բան ե ընկնում հրահանի և փո-
ղատուիի անցքի կամ փակաղակի կոթունի
միջեւ, այդ ես կարող ե փստոցի պատճառ
գառնալ:

Յեթե կոտրվում ե կամ թուլանում ե մար-
տական զսպանակը, հրահանի, փակաղակի կո-
թունի և փողատուիի անցքի վրա լինում են
ջարդվածքներ ու քերծեր—նորից փստոցներ են
առաջանում:

Յերբ չենք ստուգում պտուտակիչի ողնու-
թյամբ մարտական փակի անցքից զարկանի
ասեղի դուրս գալը, յերբ նա քիչ ե դուրս գա-
լիս այնտեղից, յերբ մինչև վերջ չենք պտու-
տակել պոչի պտուտակը, կամ փակաղակը
մինչև վերջ դեպի աջ չենք դարձրել—նույնպես
փստոցներ են լինում:

Ահա այն բոլոր անսարքությունները, վո-
րոնց հետ գործ պիտի ունենա հրացանաձիգը:
Այդ ամենը պետք ե նաև լավ իմանա, և բացի

դրանից, պետք և հիշի, վոր ամեն անսարքություն ինքը վերացնել չի կարող։ Հակառակ գեպքում այսպիսի բան կարող և ոտացվել։ Նկատեց, դիցուք, հրացանաձիգը, վոր վորեւեղապանակ թուլացել և կամ ծովել և, և սկսում և ինքն ուղղել այդ զսպանակը և վերջի վերջո կոտրում և և այդպիսով զսպանակն ուղղելու համար արհեստանոցում պահանջվող չնշին աշխատանքի փոխարեն նա նոր զսպանակ պատրաստելու լուրջ աշխատանք և ոտեղծում։

Ընդհակառակը, յերբ հրացանաձիգը հաստատապես գիտենա, թե ինչը կարող և ինքը չտկել և հրացանի ինչպիսի անսարքության մասին պետք և հայտնի հրամատարին կամ իր ավելի փորձված ընկերոջը, կամ ուղարկի արհեստանոց, այն ժամանակ կարելի յե ասել, վոր նա բավականաչափ յուրացրել և իր դործը։

ՀՐԱՑԱՆԻ ԽՆԱՄՈՒՄՆ, ՈՒ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Հրացանի խնամումը։ Ամենից առաջ յարաքանչյուր հրացանաձիգ պետք և ամեն որ զննի հրացանը նախքան ծառայության դուրս գալը և ամեն որ ծառայությունից վերադառնալուց հետո թեթև սրբի փողանցքն ու փամփըստանոցը։

Ծառայության դուրս առաջ հրացանաձիգը հրացանը զննում և այնպես, ինչպես հրացանը սարքելուց հետո, և բացի դրանից, համոզվում

ե, թե արդյո՞ք նշանոցը նշտական հասաման
վրա յեւ:

Հրացանը ցրտից չպետք է յերբեք միան-
գամից տաք չենքը բերել: Հարկավոր ե թող-
նել, վոր հրացանը նախ քրտնի-յետ զա ցուրտ
չենքում, թե չե նա կարող ե ծածկվել ժան-
դով: Միայն նրանից հետո, յերբ հրացանը
վերջնականապես կքրտնի, պետք ե սրբել փո-
ղանցքը, բայց անպայման չոր լաթով կամ
խծուծով: Նույնպես չոր լաթով կամ խծուծով
պետք ե առաջ սրբել հրացանի մնացած բոլոր
մասերը և նոր միայն սկսել յուղել:

Պետք ե միշտ հիշել, վոր հրացանի յուրա-
քանչյուր, մինչև իսկ առաջին հայացքից ամեա-
նաչնչին անսարքությունը անդրադառնում ե
հրաձգության դիպուկության վրա, ուստի և
պետք ե հրացանը պահպանել հարվածներից ու
վայր ընկնելուց: Առանձնապես անհրաժեշտ ե
հետեւել, վորպեսզի չփշանան հատիկը, նշա-
նոցային շրջանակն ու սվինը: Այդ մասերի ա-
մենափոքր անսարքության դեպքում հրացա-
նաձիգը նշանին չի դիպցնի:

Մենք դիտենք, վոր ավազը, փոշին, ձյու-
նը և ցեխը փողանցքն ընկնելով, կարող են
պատճառ դառնալ փողի ճանգովածքների, ու-
ռուցլածության և պայթման: Իսկ յեթե ա-
վազը, փոշին ու ցեխն ընկնեն հրացանի մյուս
մասերի մեջ, կարող են դժվարացնել նրանց
գործողությունը: Այդ պատճառով հարկա-
վոր ե պահպանել հրացանը կեղտոտելուց:

Այն դեպքում, յերբ հրացանը չի կարելի
դնել բուրդի մեջ, դետնին դնել պետք ե ան-

պայման փակաղակի կոթունը գեղի ցած, վորովհետև կոթունից ցեխն ու փոշին սրբելն ավելի հեշտ է, քան թե յեթե այն ընկած լինի փողառուփի պատուհանի մեջ, վորտեղ մտնում է փակաղակը:

Յերբեմն հրացանաձիգը քայլելով հրացանով անձրե կամ ձյուն դալու որը, մտածում է, թե ավելի լավ կանի, յեթե փողանցքի մեջ լաթ կամ խճուծ դնի: Ճիշտ է, իհարկե, վոր անձրեը, յեթե ուժեղ չե, լաթի միջոց չի անցնի փողի մեջ: Բայց այստեղ կա մի այլ, անձրեից շատ ավելի մեծ վտանգ, մտնավանդ մարտում: Մարտիկը հանդիպում է հակառակորդին: Շտալ կրակում է, մոռանալով, վոր նրա հրացանի փողաբերանը ծածկված է: Յեկա հակառակորդին վնասելու փոխարեն, պայթում է սեփական հրացանը, կամ լավագույն դեսպում ուռչում և փողանցքը: Ահա թե ինչու արգելվում է հրացանի փողաբերանը ծածկել վորեւե բանով:

Զի թույլատրվում նույնպես փողը կեղառոտելուց ուահպանելու համար հրացանը կրել փողաբերանը ցած զցած:

Շատ հաճախ հրացանաձիգները վարժվում են փակաղակի բանալու և փակելու մեջ առանց վարժական փամփուշտների: Դրանից փշանում են փակաղակի մասերը: Նետիչի ու գլխիկի ու կեռիքի վրա ծովածքներ են առաջանում, դժվարացնելով փամփուշտը բռնելը և ցույց տալով, վոր վարժությունները կատարված են առանց վարժական փամփուշտների:

Վորսլեսղի կրտկի պատրաստ ժամանակ
ձեռքերը չդողան, ողատակար և ամեն որ թե-
կուղ քառորդ ժամով, բարձրացնել հրացանը
մեկ ձեռքով, բռնելով կոթի ճիտից, բայց
այնպես վոր սվինը գետին չառնի: Կարելի յե
մեկ ձեռքով բռնել նաև ուսի մոտ, բայց
դարձյալ բռնած ունենալով ճիտից: Այդ լավ
մարմնամարզություն և ձեռքերի համար:

Բայց այստեղ ևս չափից ավելի յեռան-
դուն հրացանաձիգները մոռանում են, վոր
հրացանով վարժություններ կարելի յե անել
միայն աղուստի ճիտից բռնելով, և հրացանը
բարձրացնում են սվինից բռնած, կամ ծան-
բությանը չդիմանալով տմբողջ ուժով սվինը
հասցնում են գետնին: Դրանից վշանում և
սվինի լեսոց և խախտվում և հրացանի փո-
ղակը, իսկ սվինի ճոճման դեպքում առաջա-
նում և դնդակների ուժեղ ցրում:

Կարելի յե և պետք և խաղաղ ժամանակ
վարժվել խոցել սվինով, հասցնելով նրանով
կտրուկ և ճիշտ հարված: Դրա համար զորա-
մասերում գործադրվում են խստով կամ, ա-
վելի լավ և, ծղոտով լիք տօսպրակներ, վորը
կախում են վորեւե բանից: Նույնպես կարելի
յե «խրտվիլակ» պատրաստել խոցելու համար
գյուղում: Բայց վոչ մի կերպ չի կարելի սվի-
նով խոցել վորեւե կոշտ բան: Դրանից կարող
է ճոճվել, ծովել և մինչեւ իսկ կոտրվել սվի-
նը: Իսկ այդ անխուսափելիորեն կառաջացնի
դնդակների ցրում և դնդակների շեղում աջ ու
ձախ կողմերը:

Հրաժարությունից առաջ, յեթե հնարավո-

բություն կա, —իսկ հրաձգավայրում այդ
պետք ե անել միշտ, —հարկավոր ե չոր լաթով
սրբել փողանցքը, վորապեսզի նա կրակելիս
չճանդռվի փոշուց կամ կեղտից: Նույնպես և
շարունակ յուրաքանչյուր հրաձգությունից
առաջ, վորտեղ ել վոր կատարվելիս լինի
հրաձգությունը, պետք ե համոզվել, թե վո-
չինչ չկա՞ արդյոք փողում:

Մարտական փամփուշտներով լցնելու
ժամանակ կարող են պատահել վորոշ զժվա-
րություններ, մանավանդ, փակազակը դար-
ձնելու կամ փամփուշտը փամփշտանոցն ու-
ղարկելու ժամանակ: Այստեղ արդեն ժամա-
նակ չի լինի փակազակը քանդելու և փակա-
զակի շարժման զժվարությունը վերացնելու
համար, հարկավոր ե պարզապես յուղել հրա-
հանի պտուտակածե յելունը և փակազակի
կոթունի պտուտակածե կտրուճը:

Իսկ յեթե փամփուշտը չի մտնում փամ-
փշտանոցի մեջ, պետք ե հանել փամփուշտը
և տեսնել, թե արդյոք չկա փամփշտի վրա
ծովածք կամ թարմ ճանկովածք, չեն կպել
արդյոք փամփշտին փոշի, ավաղ, ցեխ. կեղ-
տուիլած չե արդյոք փամփշտանոցն առատ
յուղից կամ մեջը բան չի ընկել արդյոք:

Փամփուշտը փամփշտանոցն ուղարկելուց
հետո հարկավոր ե փակազակը աջ դարձնել
մինչև վերջ. այլ կերպ կարելի յե իջեցնել
հրահանը և փստոց կառաջանա: Փամփուշտը
փամփշտանոցն ուղարկելուց հետո հարկավոր
ե գնել պահանջված նշանոցը: Բայց նշանոցի
հասաման ժամանակ պետք ե զդուշանալ,

Վարսկեսպի շծավի նշանոցի շքջանակը և չպոկ-
մնին տնրիելի ժպյակները:

Անպայման պետք և ամեն անզամ ստո-
ւել, թե արդյոք մինչի վերջ պառուտակիվոծ և
ձգոնի զսպանակի պառուտակը: Հակառակ
գեղքում ձգոնը կարող և գուրս թռչել և կա-
ռաջանա անակնկալ ձիգ, կարող և նաև հեշ-
տաթյուր կորչել փակազակը:

Ծառայությունից վերագասանալով պետք
և ոգրել հրացանար, ինչպես տօվոծ և, և
միայն գրանից հետո գնել իր տեղը:

Հրացանի պահպանումը:—Սովորաբար
զրանոցային կամ ճամբարային գառավորու-
թյուն ժամանակ հրացաններն անզայմոն
հազզրած ովիններով, պահվում են հատուկ
բուրգերում: Այդ բուրգերում յուրաքանչյուր
հրացանի համար կա բուն՝ հրացանի համու-
րով և հրացանի ափրոջ ազգանունով:

Բուրգերը պետք և զետնից $\frac{1}{2}-\frac{2}{3}$ մետր
բարձր լինեն, հրացանները փոչուց պահպա-
նելու համար:

Հրացանները բուրգերում գրվում են բաց
փակադակներով և հրահանները գեղի ձախ
զարձրած՝ մարտական զսպանուկն ու դրանից
անզբուզբարձիկը պահպանելու համար: Բանի
նըստումն և, վոր փակած-փակազտկում դա-
պիլ-անորբագարձիկի զսպանակային մասը գե-
պի ձախ և զարձրիած, ուստի լարգածությու-
նից նա առաջնանաբար կթուլանա: Իսկ բա-
ցած փակազտկում, բայց գեղի ձախ շղար-
ձրած հրահանի հետ կթուլանա մարտական

զսովանակը, վսրբ սեղմքած դրության մեջ և
լինում:

Հրացաններն այդպես կարող են պահել
տյն մարտիկները միայն, վորոնք չեն գրա-
նվում ծառայության մեջ: Խսկ այն զեպքում,
յերբ հրացանաձիգները գտնվում են պահա-
կում, հրացանները թեև պահվում են բուր-
գերում, բայց փակադակները պետք է փոկ
լինեն:

Յերթում, գաշատում հանգուանալիս, հր-
ացաններից սովորաբար բուրգ են կազմում:
Դրա համար գոյություն ունեն ողեր, վոր
պատրաստում են իրենք հրացանաձիգները,
վորոնց մասին մենք առացինք վերևում, և
վորոնք մտնում են պատկանելիքի մեջ:

Խսկ յերբ մարտիկները մարտական սրբ-
րագայում խրամատներ են փորում, վորպես-
ով հրացանները ձեռքի տակ լինեն, վոչ թե
բուրգեր են կազմում նրանցից, այլ ուղղուիք
գնում են հրացանաձոյի մոա չոր հողի վրա,
բայց ինչպես վերն առացինք, անպայման փա-
կադակի կոթունը դեպի ցած:

Յերբ հրացանաձիգը գտնվում է մտնու-
վոր բնակարանում, նա աղետք է հրացանը
գնի այնպես, վոր շարունակ աչքի առաջ ու-
նենա: Թույլատրվում է այդպիսի դեպքում
հրացանը կախած ունենալ: Բայց հրացանը
պետք է հեռաւ լինի դունիք ու վառարանից,
վորպեսով նրա վրա չաղղեն իոնավությունն
ու ջերմությունը:

Բոլոր զեպքերում, յերբ հրացանը բուր-
գերում չի պահվում, նրանից հանում են ավել-

նը, իսկ փակաղակը պահում են այնպիսի ռք-
բությամբ, ինչպես և բուրգում յեզած միջո-
ցին, այսինքն՝ բացում են փակաղակը և հբո-
հանը դեպի ձախ դարձնում:

Մեկ հրացանից ավելի ուսի վրա կրել չե-
թույլատրվում, վորովհետեւ մի քանի հրա-
ցան ուսի վրա դիպջում են իրար և փշանում
են: Յեթե հրացանաձիգը հրացանը կրում է
փոկի վրա, պետք է անպայման համոզվել,
վոր փոկն ամուր լինի և լավ ամբացված լինի:
հրացանին:

Յերկաթուղիներով յերկար ժամանակ
ճանապարհ դնալիս, վաղոններում պատրաս-
տում են պատի բուրգեր, այնպես, ինչպես
զորանոցներում: Իսկ յեթե յերկար չե ճանա-
պարհը, հրացանը պետք է պահել իր զիժայ
ծնկների տրանքում, ուղղաձիղ, սվինը հո-
նած: Մայրահեղ դեպքում հրացանը կարելի
յե զնել դարակների վրա, բայց այնպես, վոր
նա չկարողանա վայր ընկնել ու ջարդվել:

Մայերով տեղափոխվելու ժամանակ հը-
րացանները կարելի յե բռնել ինչպես հարմար
ե, բայց այնպես, վոր սվինը պատռհմանը
շփիրավորի ընկերոջը և խնամքով պահպանե-
լով հրացանները ջարդված քներից: Յեթե հր-
ացանները շտահ են, նրանց սայլի վրա յեն
դնում ծղոտի կեմերով փաթաթած: Առանձին
հրացանը, յեթե փոխադրում են սայլով, կա-
րելի յե զնել փոփուկ իրերի վրա:

ՀՐԱՋԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ, ՀՐԱՑԱՆ
ԱԽՍԻՆ ԴԵՄ ՏԱԼԸ, ՆԵՍՆԱՌՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ
ԶԻԳԸ

Հրաձգության համար հրացանածիզը կո-
րող և ընդունել այնպիսի զբություն, ինչպի-
սին ուզում և, միայն թե ինքն իրեն հարմար
պրտ, և գինքը կայուն գրված լինի:

Մարտում սովորական զբությունը և
մարտիկի համար ամենահարմարը կլինի այն
զբությունը, վորից կարելի կլինի կրակել



Նկ. 28. Կանգնած հրացանածու-
թյան պատրաստվելը.

Նկ. 29. Կանգնող հրա-
ցանածություն

պատկան: Բայց լինում են վերջեր, յերբ
հրացանածիզը, պատկերով չի տեսնում նշո-

որ, այն ժամանակ նա պետք է ընդունի մի այլ
դրություն, վորով կարողանա տեսնել նշանք:
Այդպիսի դրություն, բացի պառկած դրու-
թյունից, կարող է լինել հրաձգությունը ծնկի
վրայից, նոտած ու կանգնած կրակելը:

Կանգնած դիպուկ կրակելու համար հար-
կավոր է կայուն կանգնել վոտքերի վրա, վո-
րովհետեւ յեթե հրացանածիզը ճոճվի, յերե-
րա, զբա հեա միասին կրակի պատրաստվե-
լիս կերերան և նրա ձեռքերը, իսկ դրա հետ
միտսին՝ և հրացանը: Իսկ յերբ հրացանը յե-
րերաց, զնդակն անկառկած նշանին չի դիպչի:

Գետք և կայուն կանգնել նաև նրա հո-
մար, վոր հրացանը կրակելիս յետահարում և
տալիս—յետ և հրում հրացանածին: Աւրեմն
կրակելու ժամանակ անպայման պետք է ա-
մուր կանգնել վոտքի վրա, վորապեսվի կրակե-
լիս յետ զգնայ և չփաշել փողը աջ կամ ձար,
մեր կամ վար:

Ամենալավն այն է, յեթե հրացանածիզը
կրակելիս փոքր ինչ լայն զնի վոտքերը, ա-
մուր կանգնելով յերեւ վոտքի վրա: Իսկ
փորութեազի նշանառության համար լավ լինի,
հարկավոր է վոչ միայն լայն զնել վոտքերը,
այլև կողքը դարձնել դեպի նշանը, այսինքն՝
անել կիսաշրջան դեպի աջ: Կողքի դառնա-
յով, հրացանածիզը վոչ միայն ամուր և
կանգնում վոտքի վրա, այլև առաջ և տալիս
ձախ ուսն ու ձախ ձեռքը: Իսկ այդպես ամենի
հետ կլինի ձախ ձեռքով պահել հրացանաը և
ամփելի հարմար կլինի նշան բռնել:

Պահիած կրակելու համար հրացանածիզը

գեպի նշանը կիսաշրջան պառկում և զետնին
տափակի, հենվելով յերկու արմնելի վրա և
բարձրացնելով կուրծքն ու դլուխը: Զախ
ձեռքը պետք և անպայման պահի հրացանը
նշանոցի տակից, իսկ աջը մինչև հրացանը
լցնելը փառկաղակի կոթունի վրա, իսկ լցնե-
լուց հետո աղուտափ ճիթի վրա:

Նստած կրակելու դրաւքյամբ առանձնա-
պես հարժար և, յեթե կարելի յէ այնպես նրա-
ուել, վոր մեջքի ներքեսի մասը հենի վորեն
բանի: Նստած կրակելու համար պետք և նրա-
ուել նշանի նկատմամբ կիսաշրջան դեղի աջ,
բացել (չուել) վոտքերը և կրունկներով ամուր
հենվել գետնին: Ամբողջ մարմինը հարկավոր
և թեքնյ առաջ, ձախ արմունկը նույնույն
այնքան առաջ տալ, վոր նու գիպչի ձախ վոտ-
քի սրունքի կակուղ մոխն (փաչա): և ծնկի
վոսկը ցածը լինի:

Այդ ավելի մեծ կայունություն կտա ձախ
արմնելին, քան թե, յերբ հենվում են ուղիղ
ծնկի վրա: Աջ արմունկը պետք և հենվի ծնկի
խաղին, բայց միայն նրա ներսի և վոչ թե
վերին կողմից:

Ծնկի վրայից կրակելու դրաւքյամբ տար-
րերվում և նստած դրությունից նրանով, վոր
հրացանաձիգը յետ քաշելով աջ վոտքը կամ
առաջ բերելով ձախ վոտքը, իշում և աջ
ծնկի վրա և նստում և դրած կրունկի վրա:
Այդ դեպքում ձախ ծունկը հենարան և ծառա-
յութ ձախ ձեռքի արմնելի համար, վորը հրա-
ցանը պահում և նշանոցի տակ: (Նկար 31):

Ինչպես ել հրացանաձիգը կրակելիս լի-

նի, — պառկած կրտ նստած; — ևս ճիշտ պետք
է ովայի հենարանից, յերեւ հենարան կա
ծեռքի տակ:



Նկ. 31. Ծնկի գրային կըտկելը

Առանձնապես կարեոր ե կայուն դրու-
թյուն ունենալ կանգնած կրակելու ժամանակ։
Այստեղ պետք է աշխատել ովտովել վորեն
Հենարանից, թեկուզ միայն արմունկների հա-
մար։

Հրացանն ուսին գեմ տալը, նշանառու-
թյունն ու կրակելը։ Հրացանը ճիշտ ուսին
զեմ տալու համար հարկավոր ե արագ բար-
ձրացնել հրացանը նշանոցն աչքի բարձրու-
թյան հավասար, ուղղել հրացանը դեպի նշա-
նը և ամուր հենել կոթի իսկատակը վզի և աջ
ուսի փոսիկի մեջ։ Գլուխն այդ ժամանակ
թեքվում է դեօլի հրացանի կոթը, բայց վլոյր
չի բարձում։ Հետո հրացանաձիգը վակում է
ձափ աչքը, իսկ աջ աչքն այնպես է հարմա-

բեցնում, վոր Հատիկի դադաթը յերնա նշանոցի կտրունի մեջտեղից և նրա վերին յեղիքին հավաստր (Հարթ Հատիկ): Աջ ձեռքի արմտնկը փոքր ինչ բարձրացնում է, վորսիհան այդպիսով ավելանում է ուսի փոսիկը: Զախ արժունկը տանում է Հրացանի տակ և կացնում է մարմնին կամ հենում է փամփրշտամանին: Զախ ձեռքի ավեր պահում է Հրացանը վորաեղից հարմար է, նոյնու ձեռքի յերկարության: Աջ ձեռքի մատները, ինչպէս և կրակի պատրաստվելիո ամուր պահում են Հրացանը ճախց բռնած:

Նրանից հետո, յերբ Հրացանունիկը միանգամայն պատրաստ է Հրածության, մըրնում է միայն կրակել, այսինքն՝ ուսհուն սեղմել ցացամատով ձգանին: Ահա Հրահանի այդ սահուն իջեցումն առանց խախտելու նշան ուրած հրացանի դրությունը, ճիշտ նշանառության հետ միասին Հրացանածզի ամենապքար և ամենապլավոր պայմանն է Հրացանից գիտուկ կրակելու համար:

Նախքան նշան բռնելը, ովետք է խոր և գանդաղ ներշնչել, հետո նույնպես գանձող արաւաշնչել, բայց վոչ մինչև վերջ, այլ փոքր ինչ պահել չունչը: Միայն նրանից հետո պետք է նշան բռնել: Իսկ յեթե Հրացանածիզը Հրածության ժամանակ ուժեղ չնչի, կուրծքը կշարժվի, իսկ այդ անպայման կշեղի Հրացանը նշանից:

Բացի գրանից, չպետք է թարթել աչքերը: Թեկուզ մի գայրեկանոց աչքը թարթելիս, չդիմես, թե ուր է գնում, գնդակը, ուրեմն և


չի բախում՝ պիտակ նա արգյուք նշանին թե վոց:

Շառերը վախենում են ձիգից, ցնցվում են ձիգի ժամանակի: Պարզ է, վար ցնցվող մարդու ձևում կցնցվի և հրացանը և գրեշակը կվրիսլի:

Յուրաք, խանակությունը և դիմացի ուժեղ քամին յետ են պահում գնդակը և նա չի հասնում նշանին: Ծոզը, չարությունը և ուղեկից քամին տուաջացնում են զնդակի անգլանցում, այսինքն՝ գնդակն անցնում և նշանից: Աւրեմն յայտ խմանալով, թե ինչպես և կրակում հրացանը, ցուրտ ժամանակ պիտք են շանառություն կեռը վերցնել մի փոքր վեր, իսկ առաք ժամանակ՝ մի փոքր ցած:

ՓԱՄՓԵՏԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱՅԱ-
ՑՈՂՈՒԹՅՈՒՆ ԶԵԴԻ ՄԱՍԻՆ

Մարտական փամփուշտը կշռում է $22\frac{1}{2}$ դրում (5 մսխալ 27 դոլյա), նա բաղկացած ե պարկուճից, պատիճից, լիցքից և գնդակից (նկար 32):



Նկ. 32. Մարտական փամփուշտ.

Պարկուճում, — արույրե խողովակ, — տեշավորվում են փամփուշտի բոլոր մասերը: Ձիգի մոմենտին պարկուճը փոքր ինչ բայցանում է, բայց չի պատռվում և գդակովից հետ-

զեկով մարտական փակի թասին, իսկ իր կողերով կիսդ մոռենալով փամփշտանոցի պատերին, փակում և փողը դադերի ողութեամբ զեկի փակաղակի կազմը:

Ինքը պարկուճը բաղկացած և մարմնից, վորի մեջ տեղավորվում և վառողի լիցքը, բերնամասից, վորի մեջ մտցված և զնզակը և զգակից իր պոտենկով: Այդ գլամիր ուստարաւոված և նրա համար, վորպեսպի նետիչի պոտոր ճանկի պարկուճը:

Գդակի մեջ կա բուն պատիճի համար, սուլիկ, վորի վրա դարկանի ասեղը ջարդում և պատիճը, և յերկու հրածակ: Այդ հրածակերի ծիջով ջարդած պատիճի բացն սնցնում և զեղի վառողի լիցը, վոր գանվում և պատիճի մարմնի մեջ:

Պատիճը մի թասուկ և, և իր մեջ պարունակում և խիստ սլայթուցիկ նյութի բաղադրություն, վորը կոչվում և շառաչուկ օրնողիկ: Եառաջուկ սնդիկը վառողի կողմից ծածկված և տնադե բոլորակով, վորը չեղոքացնում և, կամ այլ կերպ առած, որահոգանում և պատահական բռնկումից, վորովհետեւ շառաչուկ սնդիկը սլայթում և ամենափոքր հարցածից:

Վառողի լիցքը բաղկացած և անծուխ վառողից (վորպեսպի ծխի միջոցով կրակողը չմատնի իր տեղը հակառակորդին): Լիզեի քաջն և Յ գրամ:

Դնզակը, վորն ամրացված և պարկուճի մեջ, նրա բերանը շուրջանակի սեղմելով, կըուում և Յ և կես գրամ (2 և մի քառորդ

մակալ), բաղկացած է արճիճի ու ծարիբե
խառնուրդից. ծարիբը զործադրվում է զըն-
դակին ամելի ամրություն տալու համար:
Գնդակը մամլում են մելխիստի (արծաթի պես
մետաղ ե) պարուրակի մեջ:

Իսկ ինչպես և տեղի ունենում ձիգը:

Յերբ մենք սեղմում ենք ձգանի պոշը,
ձգանի իր սեռակելի վրա դառնալով սեղմում
և ձգանի զապանակին և դրանով նրա ատամին
հարկադրում և իշնել: Ատամը դուքս և սա-
հում հրահանի մարտական վոաքի առջելից,
և հրահանը զարկանի հետ ազատվում է:
Այդ ժամանակ մարտական զապանակը, ա-
զափելով և սեղմելով զարկանի պառկին,
զարկանին թափով առաջ և մղում: Զարկանը
խիստ և պատիճին, և պատիճը պայթում է:

Պատիճի պայթյունի կայծերը պարկուճի
տակի հրածակերի միջով ընկնում են վառողի
մեջ և վառում վառողը: Վառողի այրվելուց
առաջանում են գազեր, գորոնք մեծ ուժով
գնդակը դուրս են նետում փռից:


Մենք գիտենք, վոր վոքը ի շատե կար-
դին տերը խնամում և իր գույքը և հոգառա-
թությամբ պահպանում ե այն:

Հրացանաձիգ մարտիկն առաջել ևս պար-
ապար և խնամիլ իրեն հանձնած զենքը, լոգ
հող տանել, ու պահպանել այն և ուշադրու-
թյամբ նկատել նրա ըսլոր անօարգություն-
ները:


የኢትዮጵያዊነት የሚከተሉ ትናቸው


Հրացանի մարտական հպակոթթաւնները	3
Հրացանի կազմությունը	6
Հրացանի քանդելն ու սարքելը	19
Հրացանի զննությունը քանդած ձեռվ	29
Հրացանի մաքրելը	39
Հրացանի զննությունը սարքած ձեռվ	46
Հրացանի խնամումն ու պահպանումն	60
Հրացանի թբան պատրաստվելը, հրացանն ուսին դեմ առըլը, նշանառությունն ու ձիգը	68
Քառժփշտի կազմությունը և հասկացողություն ձիգի մասին	73











ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0038719

E1643

ԳԻՆՅ 10 ԿՐՊ.

A I
3823